



ՀՅԴ Պատգամաբեր



ԴՐՈՇԱԿ



Փետրվար N02 (1629)

2011



Ընտրական
իրավունքի
պաշտպանության
հաստատման
ծառայում



«Դրօշակ»
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան
Խմբագիր՝ Կ. Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեռավորումը՝ Ա. Գրիգորյանի
Ոճը՝ Ս. Փարթանյանի
Գրանցման վկայական 897
Երևան, 375010, Միեր Սկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ. փոստ. droshak@arf.am
Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի
“Droshak” monthly,
ARF dashnaksoutiun publication
Editor-in-Chief: **Rouben Hovsepian**
12| 1 Mher Mkrтчian, Yerevan, 375010
Tel. 521 876
e.mail: droshak@arf.am

Խմբագրական

«Մե ու սղիսակ» ֆաղափական դաշ 2

ԼՂՀ հիմնախնդիր

ՀՀ դաշնակցությունը Արցախում (1989-1992թթ.) 4

Հոբելյան

Փետրվարի 18-ի խորհուրդը 10

Տարածաշրջան

Ադրբեջանի գեոստեսական ֆաղափականությունը
և հիմնական ուղղությունները 14

Վկայություն

Բոլշևիկյան նենգադավերն ու հայկական
դյուցազնամարտերը Անդրկովկասում ` 1918-ին 28

ՀՀ Ազգային ժողով

Մսածումներ Հանրային հեռուստարկերության շուրջ 34

Պատմության դասեր

Աթենիի ղեկավար գաղափարախոսության
արձագոլումը Պերիկլեսի ելույթում 36

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Կոչ 44

Նոր գրեր 46

Պատկերասրահ

ՊՈՆԶԻ (Արմեն Պոռյան) 48

«Մեւ ու սոյիսակ»

բաղաբական դաս

1921 թ. փետրուարեան համաժողովրդական յեղափոխութեան 90 ամեակը Հայաստանում նշվեց քաղաքական գարգացումների չափազանց ուշագրաւ մթնոլորտում:

Իշխանական կոալիցիայի թեւերի կողմից փետրուարի 17-ի յայտարարութիւնը, փաստօրէն, միտում ունի քաղաքական դաշտում ամբողջատիրութեան հաստատման. «...կոալիցիոն կուսակցութիւնները միասնական են եւ նպատակ չունեն գալիք խորհրդարանական ընտրութիւններում իրենց քաղաքական կշիռն անկասցնել միմեանց դէմ պայքար ծառայելու եւ կոալիցիայի ներսում ուժերի յարաբերակցութիւնը փոխելու հաշուին»: Նրանք ձգտում են «խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովում կոալիցիայի ներկայացուցածութեան անհին»: Աւելին, նրանք, քաղաքական էթիկայի ու ժողովրդավարական տարրական սկզբունքների կոպիտ ոտնահարմամբ, կանխաւ ընդգծեցին նաեւ, որ «քաղաքական կոալիցիան նախազահական ընտրութիւններում հանդէս կը գայ միասնական թեկնածուով՝ ի դէմս գործող Նախազահի, դրանով իսկ երաշխիքներ ստեղծելով ապահովելու փոփոխութիւնների յերազայ շարունակականութիւնն ու մեր երկրի կայուն առաջընթացը յաջորդող

հինգ տարիների ընթացքում...»:

Ծայրայեղական ընդդիմութիւնը, յանձին իր ղեկավար Լ.Տ.Պ.-ի, փետրուարի 18-ի քաղաքական հանրահաւարում, նոյնիսկ շիշելով կոալիցիայի նշուած յայտարարութիւնը, միանգամից կրկնեց իր առաջարկած քաղաքական վաղեմի լուծումը. «Անցանկալի գարգացումներից խուսափելու միակ միջոցն արտաստեղծ նախազահական եւ խորհրդարանական ընտրութիւններն են, որոնք արդէն, քաղաքական անհրաժեշտութիւնից առաւել, վերածուել են ազգի ու պետութեան գոյութեան խնդրի»:

Այսպիսով՝

ա. իշխանական կոալիցիան ամեն ինչի պատրաստ է (բնականաբար՝ նաեւ լայնամասշտաբ ընտրախախտումների) առաջիկայ ընտրութիւններում բացարձակ մեծամասնութիւն ապահովելու համար:

բ. ծայրայեղական ընդդիմութիւնն էլ ընդունակ է ամեն ինչի (ընդհուպ մինչեւ «սոցիալական բունտ» կոչուածի «գէշ խաստեաթ»-ը ակնարկելով ու շանտաժի միջոց դարձնելով) կոալիցիայի նշուած մտադրութիւնը տապալելու համար:

Ո՞րն է քաղաքական այս երկու մօտեցումների տրամաբանական սինթեզի գլխաւոր առանցքը. ե՞ւ իշխանական կոալիցիան, ծայրայեղական ընդդիմութիւնը ձգտում են, «սեւ ու սպիտակ» երանգաւորմամբ, ձեւաւորել քաղա-

քական առաջիկայ բեմահարթակը: Այլընտրանքային ուժի առկայությունը անհանգստացնում է հայաստանեան 20-ամեայ քաղաքական էլիտային: «Սեւ ու սպիտակ» երանգատրումը, անհրաժեշտաբար, ենթադրում է առճակատման ռեալ դրսեւորումներ՝ փողոցներից մինչեւ երրամբիոններ: Այս իմաստով, ինչպէս մարդկային ու նիւթական ռեսուրսներով, այնպէս էլ բազմաբնոյթ լրատուացանցերով, լաւապէս սպառնազինուած են երկուսն էլ:

Այլ խօսքերով՝ առաջիկայում ե՛ր կոալիցիոն իշխանութիւնները, ե՛ր ծայրայեղական ընդդիմութիւնը, «նա, ով մեզ հետ չէ, մեր թշնամին է» քաղաքական վարքագծի փոխարէն, որդեգրելու են «նա, ով մեզանից մէկն ու մէկի հետ չէ՝ ընդհանրապէս գոյութիւն չունի» վարքագիծը:

Այս ամենը կատարում է Հայաստանում սոցիալական շարժումը կանխելու նպատակով: Մենք ասել էինք եւ կրկնում ենք, որ սոցիալական շարժումն է վերջ դնելու 20-ամեայ էլիտայի տիրապետութեանը, որը դրսեւորուել էր դրսեւորում է նոր ազատականութեամբ եւ նոր պահպանողականութեամբ:

Սոցիալական շարժման թերեւս նախնական արտայայտութիւններից պէտք է համարել ՀՅ Դաշնակցութեան նախաձեռնութեամբ փետրուարի 18-ին մեկնարկած «Ընտրական իրաւունքի պաշտպանութեան հասարակական շարժում»-ը, «Քուէն ուժ է» կարգախօսով, որին, ակնկալվում է, աստիճանաբար, կը միանան աւելի մեծ թուով քաղաքական կուսակցութիւններ եւ հասարակական կազմակերպութիւններ: Սոյն շարժումը, որն, ըստ էութեան, սոցիալական մեծ շարժման իրաւական եւ քաղաքացիական բաղադրիչն է կազմում, նախ նպատակադրում է ստեղծել իշխանափոխութեան հնարավորութիւնն ապահովող ընտրական համակարգ:

Շարժումը ընտրական իրաւունքի եւ բուէր պաշտպանութեան գաղափարի շուրջ ժողովրդի ինքնակազմակերպման ձգտում է: Շարժման թիրախը տարիների ընթացքում հասարա-

կական գիտակցութեան մէջ ընտրութիւնների արդիւնքների կանխորոշուածութեան կարծրատիպն է, որի արդիւնքում քաղաքացիները, եւ առհասարակ մեր ազգը, կորցնում է իր հաւատը ժողովրդավարութեան կարելիութիւնների հանդէպ:

Գաղափարախօսական միեւնոյն ակունքներից ընկած լինելով, ե՛ր իշխանութիւնները, ե՛ր ծայրայեղ ընդդիմութիւնը չեն հաւատում, որ սոցիալական շարժումները կարող են ընթանալ էվոլուցիոն զարգացման, խաղաղ, ոչ բռնի եղանակով եւ արդիւնատրուել ժողովրդավարական քուէարկութեամբ: Նրանք սոցիալական շարժում հասկացութիւնը, բառացիօրէն, ասոցիացնում են սոցիալական բունտ հասկացութեան հետ եւ ստեղծում հասարակական կարծիքի շփոթ, ըստ որի սոցիալական շարժումը ազգային անվտանգութիւնը խաթարող սոսկական ապստամբութիւն է:

Չաւեշտային այն է, որ իշխանութիւնների քաղաքական գլխատր ուժը, իր նոր պահպանողականութեամբ, ինքն իրեն յայտարարում է «սոցիալական արդարութեան ջարսագով», իսկ ծայրայեղ ընդդիմութիւնը, իր նոր ազատականութեամբ, հռչակում է սոցիալական արդարացի պահանջներին «կազմակերպական աջակցութիւն ցուցաբերել»-ու իր պատրաստականութիւնը:

Պէտք է վերջ դնել ծաղրանկարային այս խեղկատակութեանը:

Պէտք է սոցիալական բողոքն ու շարժումը օժտել սոցիալական համապատասխան գաղափարախօսութեամբ:

Պէտք է սոցիալական շարժումը դարձնել առաջիկայ ընտրութիւնների գլխատր առանցքը:

Այլապէս կանգնելու ենք, ծանօթ հանգերգերով ողորուած, «սեւ ու սպիտակ» քաղաքական բեմահարթակի առջեւ, որտեղ միշտ էլ յաղթում է «չարեաց փոքրագոյնը»:

Սկսել ենք, քաղաքացիական եւ իրաւական բնոյթով, հասարակական շարժում եւ, տարածուելով, պիտի շարունակենք:

ՀՀ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՑԱԽՈՒՄ

(1989–1992 թթ.)

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ Հ. Բ.

Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Եվ այսպես. Արցախը դառնալու համար դայֆարի չորրորդ սարում՝ 1991-ին դայֆարի հիմնական կենտրոններն էին Բերդաձորը, Պեսաճենը, Շահումյանը, Հադրութը: «Օղակ» գործողության զոհ դարձան Պեսաճենի ենթաբաժանի 5, Հադրութի բաժանի 14 և Բերդաձորի ենթաբաժանի 5 գյուղեր: Պեսաճենից բռնագաղթել են 882 ընտանիք՝ 2700 բնակիչով, Մարսունաճենից՝ 82 ընտանիք՝ 300 բնակիչով, Բերդաձորի ենթաբաժանից՝ 193 ընտանիք՝ 661 բնակիչով, իսկ Հադրութի բաժանի 14 գյուղերից՝ 798 ընտանիք՝ 1452 բնակիչով¹⁷: 1991 թ. հուլիսի 1-ի դրությամբ Բերդաձորի գյուղերը կրել են 764742 ռ. վնաս, իսկ Հադրութի բաժանից բռնագաղթած գյուղերը՝ 3254640 ռ. վնաս¹⁸: Ընդհանրապես՝ 1988–1991 թթ. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի, Մարսունու, Հադրութի և Շուշիի բաժաններից 1572 ընտանիք հակառակորդի կողմից կրել է 30 մլն. 506 ռ. վնաս¹⁹: Մինչև 1991 թ. կեսերը հափճակվել էր մոտավորապես 22 հազար անասուն (խոզեր եղջերավոր, ոչխար, խոզ), հրկիզվել էր 100 հազար հեկտար բերք, իսկ մինչ



այդ ազերիների կողմից երեք սարվա ընթացքում գործնի ընդհանուր արժեքը գնահատվել է 7 մլն. ռուբլի²⁰:

Թուրք-ազերիների և խորհրդային զինված ուժերի կողմից իրագործված ամենասուր արարքներից էր

17. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ (այսուհետև՝ ԼՂՀ ՊԱ), ֆ. 254, ց. 5, գ. 7, ք. 8-10:

18. Նույն տեղում, ք. 23 և 24:

19. Նույն տեղում, ք. 26:

20. «Ազդակ», Բացառիկ, 1992, էջ 71:



անձնագրային ռեժիմի անցկացումը Լեռնային Ղարաբաղում: Հազարավոր հայ ընտանիքներ ստրագվեցին, նրանց ունեցվածքը թալանվեց: Նման ստուգումներ անցկացվեցին մանավանդ Ստեփանակերտ ֆաղափում, Շահումյանում, Բերդաձորում, Հաղուրթի Երջանում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավար արխիվում գրավում է մի փաստաթուղթ, որը 1991-ի սեպտեմբերի 10-ին կազմվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական բաժնի ղեկ Ռ. Ա. Իգոցկինայի կողմից: Փաստաթղթում հանգամանորեն Երևանում է նույն թվականի մայիս-օգոստոս ամիսներին մարզի 116 բնակիչներից մարզային իրավաբանական բաժնի մասն բողոքների մասին: Թուրք օմոնականները և խորհրդային բանակի զինվորները մտնելով հայերի տներ, կասարել են անօրեն ձեռքառություններ, թալանել մարդկանց ունեցվածքը և այլ ավազակություններ: Միայն մայիսի 16-18-ը, Գեօրգեն-Մարտունաճենի ողբերգությունից հետո ներխուժելով 46 բնակարան, ահ ու սարսափ են սարածել: Փաստաթղթում մեջ են բերված ըստ բնակարանների կասարված հանցագործությունների վերաբերյալ սվյալներ²¹:

Հայ հեղափոխական դաժնակցությունը ֆաղափական այն ուժերից էր, որն առաջիններից մեկը իր բողոքի ձայնը բարձրացրեց և հարց դրեց այդ ստորաբաժնի մասին օրենքի խստագույն ուժով: Հակառակորդի կողմից խուզարկումներ ու զենքի առգրա-

վում կասարվում էին միայն հայկական բնակավայրերում: Այդ նույն թվականի սեպտեմբերին արցախցի 92 դաժնակցից այրերի ստորագրությամբ Ռուսաստանի նախագահ Բ. Ն. Ելցինին ուղարկած բողոքնամակում գրասմվում է, որ արդեն չորրորդ օրն է, ինչ Արցախի հողը օգնություն է խնդրում, սակայն նրա խնդրանքը հանդիմանում է խուլ դաժների և խորհրդային ղեկավարության անսարքությունը: Նամակի հեղինակները հույս են հայտնում, որ Ռուսաստանը օգնության ձեռք կմեկնի ու արցախցիներին չի թողնի դժբախտության մեջ և կօգնի չորացնել իրենց արսատները²²:

Այնուհայտ է, որ թուրք-ֆոչվորները ներխուժելով Արցախ-Ղարաբաղ, ձգել են բնակություն հաստատել բանուկ ճանադարհների հարևանությամբ, հարթ, ոռոգելի սարածքներում, աղբյուրների մոտ: Եվ, այսպես, 1989 թ. հունվարի 12-ի սվյալներով Լեռնային Ղարաբաղի մարզում հաշվվում էր 209 բնակավայր, որոնցից 157-ը հայկական, 50-ը՝ թուրքական, 2-ը՝ այլազգիներ: Այդ ժամանակ մարզի 189085 բնակիչներից 145450-ը հայեր էին, 40688-ը՝ թուրքազերիներ: Շուտի ֆաղափում բնակվում էին 14212 թուրք: Այստեղ բնակչության թվի արագ մեծացումը բացատրվում է նրանով, որ Հայաստանից հեռացած բավականին թուրքեր անօրեն բնակություն էին հաստատել Շուտում²³:

Մարզի սարածքում գտնվող թուրքական բնակավայրերը, կասարելով Աղբյուրների իշխանությունների հանձնարարությունները, փակում էին ճանադարհները, երթևեկության ուղիները, ջրագծերը և նյութական ու բարոյական մեծ վնասներ հասցնում երկրամասի հայ բնակչությանը, էլ չենք խոսում անասնաբուծությունների, ավտոմեքենաների թալանի, Ստեփանակերտ եկող գնացքների հափեսակման և այլ ավազակությունների մասին: Դրան վերջ տալու միակ ուղին թուրքական այդ բնակավայրերում սեղանդաված կրակակետերի վերացումն էր: Իսկ դա մտնում էր Դաժնակցության ռազմավարական ղյանի մեջ: Առաջինը նախատեսվեց կրակակետերը լռեցնել Մարտակերտի Երջանի Ունուղլու բնակավայրում: Այդ մասին հանգամանորեն նկարագրել է Վահան Հովհաննիսյանը իր վերոհիշյալ հուշերում: Բացի Ունուղլուի կրակակետերը լռեցնելուց, հայ ազատամարտիկները նաև նոպասակ ունեին վրեժ լուծել Գեօրգենի ու Մարտունաճենի համար: Հայ հեղափոխական դաժնակցությունը ծրագրեց հակառակորդին դաժնա-

21. ԼՂՀ ՊԱ, ֆ. 254, ց. 5, գ. 7, թ. 27-30:
 22. Նույն տեղում, թ. 36-38:
 23. Նույն տեղում, թ. 46:



խան հարված հասցնել Արցախ-Ղարաբաղի ողջ տարածքում: Վահան Հովհաննիսյանի վկայությամբ՝ Արցախի հարավային օջախում այդ գործողությունները ղեկավարում էին Հրանտ Մարգարյանը և նրա մարտական ընկերներ Բեկոր Ասոսը, Ազոն, Սամվել Բարսայանը, որոնք ներկայացնում էին դաժնակցական «Անտառ» կոմիտեն, իսկ հյուսիսում՝ Շահումյանում գործը հանձնարարվել էր դաժնակցական «Լեռնատար» կոմիտեին, որը ղեկավարում էին Շահեն Մեղրյանը և ՀՀԴ Հայաստանի կազմակերպության անունից այնտեղ գործողված Վահան Հովհաննիսյանը²⁴: Հենց Ումուդլուի չեզոքացումը մտնում էր «Լեռնատար» կոմիտեի ծրագրի մեջ: Ումուդլուն Մարտակերտի օջախում ամենամեծ ավազակաբույնն էր: Չնայած առաջին փորձը հաջողությամբ չավարտվեց, սակայն հայ հայրուկների հասցրած երկրորդ հարվածն անդառնալի էր, որի հետևանքով կոսովեց Ումուդլուի լիսիությունն ու դիմադրությունը: Գյուղը մաքրվեց, բնակչությունն ուղղաթիռներով հեռացավ և այդ ավազակաբույնը դադարեց սղառնալ Հյուսիսային Արցախի անվտանգությանը: Միանգամայն ընդունելի է այն տեսակետը, որ «Օղակ» գործողությունը դարաբաղցիներին և կամավորական ջոկատների մարտիկներին ստիպեց անտառալի, անկուն, կասաղի դիմադրություն ցույց տալ խորհրդավազերիական ուժերի կողմից հայկական բնաչությանը բռնագաղթի ենթարկելու ծրագրերի դեմ: Եվ չնայած Արցախից 24 բնակավայր բռնի դատարկվեցին, սակայն Ղարաբաղը դիմակայեց և ինքն անցավ հարձակման:

Արցախի հանրադատությունը, որը հռչակվել էր 1991-ի սեպտեմբերի 2-ին, շարունակում էր մնալ բոլոր տեսակի մասակարարումներից զրկված. կաթվածահար էր գյուղատնտեսությունը, արդյունաբերական և շինարարական աշխատանքները: Թուրք-ազերիներն իրենց ավազակություններով դարձել էին սանձար-

ձակ. անասնագործություններ, շինարարական լայնամասշտաբ աշխատանքներ, հակահայկական ծավալուն ֆարոգչություն և այլ գործողություններ: Ազերիների զինված խմբավորումների շարքերն անընդհատ համարվում էին ավազակ օժոնականներով: Նրանց կողմից ճնշումները մեծանում էին Արցախի ողջ տարածքի վրա: Բոլոր այդ հարձակումներին սովորաբար նախորդում էին զինվորականների կողմից սվյալ բնակավայրերում անցկացվող խուզարկումներն ու զենքի առգրավումը: Չէին դադարում ծեծի, նվաստացման, ձերբակալությունների դեղքերը²⁵: Թուրք-ազերիները բոլոր բերդաձորցիներին հայտարարեցին դաժնակցականներ: Միայն 1991-ի մարտյան մարտերի ժամանակ դաժնակցականներն այստեղ սվել են վեց զոհ և նույնքան վիրավոր²⁶:

Այդ ամենից ելնելով՝ ՀՀԴ-ն ֆայլեր էր ձեռնարկում Արցախի հիմնահարցը դարձնել միջազգային ֆննարկման առարկա: 1991 թ. փետրվար-մարտին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների դաժնականության հանձնաժողովում, ի թիվս այլ հարցերի, ֆննարկվեց նաև Արցախի հարցը, որը բարձրացրել էր Մարդու իրավունքների դաժնական փաստաբանների կազմակերպության անունից Հայր Պալեյանը: Նա շեշտեց, որ սակավին չի ճանաչված Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, ոտնահարված են մարդկային իրավունքներն ու ազատությունները: Այդ ժամանակ Հայ հեղափոխական դաժնակցությունը Արցախի հիմնահարցի վերաբերյալ առաջ ֆաշեց հետևյալ ծրագիրը.

1. Հնարավոր բոլոր միջոցներով նդաստել Արցախի ինքնադաժնականության գործին եւ Արցախի հայության դիմադրական կորովի բարձրացմանը:
2. Բոլոր միջոցներով օգնել Արցախի տնտեսական հզորացմանը:
3. Ամեն ինչ անել՝ Արցախի հայության կրթամշակութային և հայեցի դաստիարակության համար կարելիություններ առաջացնելու նդասակով:
4. Ամեն կերդ նդաստել Արցախում հանրության թվաքանակի դաժնականմանը և ավելացմանը²⁷:

1991 թ. աշնանից սկսած արդեն հրամայական էր դարձել Արցախ-Ղարաբաղում զսնվող թուրք-ազերիական բնակավայրերում տեղակայված կրակակետերի ոչնչացման խնդիրը: Առաջին հերթին անհրաժեշտ էր ոչնչացնել Հադրութի օջախում տեղակայված կրա-

24. «Ազդակ», Բացառիկ, 20 փետրուար 1998, էջ 60:
 25. «Ազատամարտ», N 1, 8.03.1991:
 26. Նույն տեղում:
 27. Նույն տեղում, N 2, 15.03.1991:

կակեցեր: ՀՀԴ անդամ, ծննդով Հադրութի Երջանից, ներկայումս դաժնաբող գեներալ Արթուր Աղաբեկյանը դասնում է, որ ի հակակեռ «Օղակ» գործողության, Հադրութի Երջանի ինֆնադաժնադանները մեակեցին դայմանական «Խանձաձորի մարտ» անունը կրած գործողությունը, ըստ որի միավորվեցին 10 ջոկասներ և իրականացրին գործողությունը՝ «Երջանի բնակչությանը աղաժուգելով, որ մեր հողի ճակատագիրը մեր ձեռքին է»²⁸: Դրան հաջորդեց Տողի ազատագրումը: Այդ գյուղը դեռևս փառավորվել էր արաբների սիրադեմության ժամանակ: Արաբների բռնակալ թուրք Բուդախանը 9-րդ դարի կեսերին 28 անգամ փորձել է Տողը գրավել, սակայն չի կարողացել: Տողեցիներն իրենց խիզախությամբ աչքի են ընկել նաև հեժազայում: Մահմեդական ավազակաբարո դահիճների ստիժամբ գյուղի բնակչության մի մասը խանական ժամանակաշրջանում ընդունել էր մահմեդականություն: 1988-ին, Երթման սկզբին, գյուղն ունեցել է 1800 բնակիչ, որոնց ուղիղ կեսն ազերիներ էին: Առաջիններից մեկը հենց Տողում սկսեցին ստորագրություններ հավաքել Հայաստանի հեժ վերամիավորվելու համար: Տողում բնակվող ազերիներին հեժացնելու և այնտեղի հայերի կյանքն անվտանգ դարձնելու համար այնտեղ գնացին մի խումբ հայդուկներ և գնդադես Արկաղի Տեր-Թադևոսյանը: Այստեղ թուրք-օսմանականները ստեղծել էին ինֆնուրույն դաժնություն և հայերի նկատմամբ իրագործում էին սարսափելի դաժնություններ: Այդ նրանք 1991-ի ադրիլի 27-29-ին հարևանությամբ գնվող Տումի, Ազոխ, Դրախսիկ, Մեծ Թադեր և Տողի հայկական մասում իրականացրին համաժարած խուզարկություններ, կալանավորումներ և ձերբակալություններ²⁹:

Կալանավորվել էին 40 հայազգիներ, որոնք ենթարկվում էին դաժան ծեծի, նվաստացման, վիրավորանքների: Հոկտեմբերի երկրորդ կեսին Տող եկան Վաղիմիր Բալայանի, Արթուր Աղաբեկյանի, Կարո Բաբայանի, Աոս Դուլյանի, Հայաստանից Մանվել Գրիգորյանի և այլ ջոկասներ, բոլորը մոտ 100 հոգի: Արկաղի Տեր-Թադևոսյանի գլխավորությամբ մեակվեց գործողությունների վերին ասիճանի գրագեժողան: Տողի գործողություններն այնքան սահուն և անսդասելի եղան, որ թուրքերը չհասցրին ուժի գալ: Հազիվ դիմադրելով մեկ ժամ՝ սկսեցին խուճադադար փախչել գյուղից: 1991 թ. հոկտեմբերի վերջին Տողի ազատագրումը վճռորոժ եղավ Արցախյան Երթման դաժնության մեջ: Գործողությունն ավաժսվելուց հեժո «Ուրալ» մակնիժի ավժնմեժենայով Վաղիմիր Բալայանի ջոկասը ցուցադրաբար Մաժսա-



կեժս վերադարձավ զինվորական համազգեսով, զենքը ձեռքին: Տողի ազատագրումից մեկ Եաբաթ անց ազատագրվեց նաև Հադրութի Երջանի Մաժիժեն գյուղը³⁰:

Ահա այսդես սկսվեց Արցախն ազերիներից մաժրազարդելու Երջանը: Հենց այդ ժամանակ էլ, 1991 թ. դեկտեմբերի վերջին և 1992-ի հունվարի սկզբներին, թուրք դահիճները Լեռնային Դարաբաղի Հանրադեսությունը ներաժեցին դաժերազմի մեջ:

Մաժերը չէին դադարում ողջ Արցախում: Եահունյանի Երթեջ գյուղի դաժնակցական խըմբի դեկավար-խմբադես Կամոն զոհվեց դեկտեմբերի 11-ին Եահունյանի Թողան և Մաժիսու գյուղերի ազատագրման համար մղված հերոսական մաժերում, իսկ դեկտեմբերի 15-ին Ասկերանի Երջանի մեջ մժնող Չամիլլու գյուղի ազատագրման համար մղված մաժերում՝ Մաժիկն ու Ներսեժը: Դեկտեմբերի 17-ին Հասանաբաղը դաժնադանելու ժամանակ հերոսաբար ընկան դաժնակցական ընկերներ Վաչե (Վահե) Ռոսոմյանը, Գազիկ Գրիգորյանը և Վարդան Բախժյանը: Հասանաբաղը դաժնադանող մոտ 40 ազատամաժիկներ հերոսաբար դիմադրում էին

28. «ԼՂ Հանրապետություն», 09.05.1995:

29. Հրանտ Արրահանյան, Մարտնչող Արցախը, գիրք Գ, էջ 312-313:

30. «ԼՂ Հանրապետություն», 31.10.1996:



վող Մուսկադաս, Հադորսի, Կդարծի, Մոյիսակաւենի և Գիւի գյուղերին անընդհատ վնաս դատարող Ղարադաղլու (Կարադաղլու) գյուղի չեզոքացումը դարձել էր նույնպէս օրվա դահանգ: 1992-ի փետրվարի 17-ի գիշերը վրիժառու ազատամարտիկները սարքեր կողմերից մտան գյուղ: Ասոս Ղուլյանի վաւեր և Մանվել Եղիազարյանի «Արաբո» ջոկատը ձեղեղով հակառակորդի դատարանության գիծը, ճնշեցին օսոնականների և թուրքերի բանակի դիմադրությունը, վնասազերծեցին Ղարադաղլուն: Առգրավվեց 70 միավոր մարտական զենք, ոչնչացվեց 15 ավազակ և գերվեց շուրջ 60 ազերի³³: Այդ փետրվարի 22-ին վնասազերծվեց Վերին Վեյսալուն: Մինչ այդ վնասազերծվել էր Մարսունու Խոջավենդ թաղամասը:

Մնում էր Ստեփանակերտի օդանավակայանի և ամենամեծ ավազակաորջ Խոջալուի կրակակետերի ոչնչացումը: Դեռևս փետրվարի 15-ին դիրքավորվելով Խոջալուի արևմտյան մասի երկարությամբ, հայ ազատամարտիկների կողմից թուրքական կողմին առաջարկվեց թողնել Խոջալուն և հեռանալ: Ի դատարան դրան, թուրքական կողմը ուժեղացրեց Ստեփանակերտի հրետակոծումը: Հայկական կողմին ոչինչ չէր մնում անել, քան նախադատարանով Խոջալուի կրակակետերը ոչնչացնելու համար: Առաջին հերթին դիմեցին ազատագրել օդանավակայանը, որտեղ վաղուց իւրում էին օսոնականները: 1992 թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը նոնակաձիգներով և ավսոմասներով զինված հայկական ջոկատները հասան առաջավոր դիրքերին: Անակնկալի եկած հակառակորդը, թողնելով մի քանի դիակ, նահանջեց: Օդանավակայանի աջ կողմից հարձակվում էր Բալուջայի (Այգեսան) ջոկատը, որին աջակցում էին Ասոս Ղուլյանի վաւեր և ՀՀԴ ջոկատի մարտիկները:

Հակառակորդը ստիպված նահանջեց: Օդանավակայանում ծածանվեց Հայոց եռագույնը: Այդ հայ ինքնադատարանական ուժերը սարքեր կողմերից մտան Խոջալու: Գլխավոր ճանադարհի կողմից հակառակորդի հեռանալու համար թողնվել էր միջանցք: Այսպիսով՝ փետրվարի 26-ին, մի քանի ժամվա ընթացքում, հայ ինքնադատարանական ուժերը, սալով 8 գոն և 20 վիրավոր, ջախջախեցին Խոջալուն սեղակայված ազերիների ուժերը, լռեցրին այստեղի բոլոր կրակակետերը, և բացվեց Ասկերան սանոդ խճուղին:

Ամենագլխավորը դեռ առջևում էր: Դա Շուշի կրակակետերի լռեցումն էր, քաղաքի ազատագրումը և Գորիս սանոդ ճանադարհի բացումը: Շուշից ամեն օր հրետակոծում էին Ստեփանակերտը և հարևան հայկական բնակավայրերը: Շուշի ազատագրման մարտերին մասնակցելու համար կազմավորվել էր Դաւենակցության հասուկ ջոկատ, որը հետո դարձավ գումարտակ: Շուշի ազատագրման և այստեղի կրակակետերի ոչնչացման գործում չափազանց մեծ դեր է խաղացել Հայ հեղափոխական դաւենակցությունը, իսկ հետագա մարտերին առավել նշանակալից են եղել դաւենակցական գումարտակի գործողությունները: Գումարտակի համար որդես հանգրվան է հանդիսացել Շուշի քաղաքը: Վահան Հովհաննիսյանի վկայությամբ Արցախյան դատարանում զոհվել են ավելի քան 300 դաւենակցական ընկերներ³⁴:

Փա՛նք նրանց: Փա՛նք նրանց ծնող մայրերին:

33. «Ազատ Արցախ», 18.02.1992:

34. Նույն տեղում, էջ 70:

Փետրվարի 18-ի խորհուրդը

Անուի Ամսեյան

«ՀՅԴ դասնութեան թանգարան-հիմնադրամ»-ի սնօրեն

Այս տարի լրացավ 1921 թ. փետրվարի 18-ին տեղի ունեցած համաժողովրդական հեղափոխության 90-ամյակը:

90 տարի առաջ այդ օրն իրականացվեց անհավատալի, հերոսական մի քայլ, որը դեռևս իր արժանի գնահատականը չի ստացել, չի արժեվորվել նրա պատմական դերը, անաչառորեն չի լուսաբանվել: Մենք մեր նոր պատմությունը դեռ չենք ճանաչում...

1920 թ.-ի աշնանը Հայաստանի Հանրապետության վիճակը բավականին բարդացավ: Մի կողմից սեպտեմբերի 26-ին սկսված թուրքական ռազմական գրոհը, բոլշևիկյան Կարմիր բանակի ներխուժումը Այսրկովկաս և Հայաստանի սահմաններին մոտենալը, մյուս կողմից դաշնակից երկրների դավաճանական ընթացքը (դաշնակցային պարտավորությունների դրժումը՝ Ռուսաստանի հետ խնդիրներ ունենալուց խուսափելու պատճառով), Հայաստանում քաղաքական, տրնտեսական ու սոցիալական բարդ, ճգնաժամային

իրավիճակ էին առաջացրել: Թուրք-բոլշևիկյան գործակցության պատճառով Հայաստանը հայտնվել էր թուրքական յաթաղանի ու ռուսական զնդանի միջև, որոնց միաժամանակ դիմագրավել չէր կարող անընդհատ պատերազմներից հոգնած, պետական շինարարության առաջին քայլերն անող ու անհամար ներքին դժվարություններ լուծելու խնդիրների առջև կանգնած նորանկախ հայ ժողովուրդը: Այս անգամ արևելահայության ֆիզիկական բնաջնջման վտանգն էր կախված երկրի գլխին: Պետք էր ընտրություն կատարել վատի ու վատագույնի միջև... Եվ Հայաստանի իշխանությունները ընտրեցին «չարյաց փոքրագույնը»... 1920 թ. դեկտեմբերի 2-ին, Հայաստանի առաջին Հանրապետության կառավարությունը իշխանությունը հանձնեց՝ բոլշևիկյան սվինների վրա Հայաստան մտած հայազգի բոլշևիկյան գործիչներին:

Նոր իշխանությունը անմիջապես չեղյալ հայտարարեց նախնական պայմանավորվածությունը (որն, ի դեպ, ամրագրված էր պայմանագրով) և սկսեց վարել անհեռատես քաղաքականություն ու դրսևորել օտար նվաճողին վայել վարքագիծ: Նախ, անտեսելով պայմանագրի այն կետերը, որոնցով երաշխավորվում էին ՀՀ Կառավարության անդամների, ՀՅԴ գործիչների, մտավորականության, ՀՀ բանակի սպաների և այն անձանց անվտանգությունն ու հայրենիքում ազատ ապրելու հնարավորությունը, որոնք մինչ այդ պայքարել էին Հայաստանի անկախության համար: Հեղկոմն (Ս. Լուկաշին, Ավիս Նուրիջանյան, Ա. Մռավյան և այլք) ու մյուս բոլշևիկյան գործիչները, իրենց հետ Հայաստան եկած ռուսական բանակի աջակցությամբ, սկսեցին համատարած



1921 թ. փետրվարի 18, զինված խումբ

բռնությունների, բանտարկությունների, թալանի ու անօրինականության գործընթաց՝ եղած ծանր իրավիճակն էլ ավելի ծանր ու քառասային դարձնելով:

Սրա պատճառներից մեկը քաղաքական, պետական կառավարման տհասությունն էր, ազգային ինքնագիտակցության բացակայությունը և ազգային արժեքների ընկալման չգոյությունը: Նրանք Ռուսաստանում իրականացվող բոլշևիկյան քաղաքականությունը սկսեցին նույնությամբ կիրառել Հայաստանում՝ առանց հասկանալու և հաշվի առնելու տեղական ու ազգային առանձնահատկությունները:

Ձերբակալվեցին ու բանտ նետվեցին, Հայաստանից չհեռացած պետական ու կուսակցական գործիչները: ՀՀ բանակի մոտ 1500 սպա արքայվեց Բաքու և Ռուսաստան: Ամենաանցանկալի պատրվակներով, մատնությամբ, բանտերն էին նետվում տարբեր խավերի ներկայացուցիչներ (բանվորներ, գյուղացիներ, հասարակ ծառայողներ և այլն)... Նորընծա ղեկավարներն ու նրանց հետ եկածները, անպայմանորեն, բռնագրավում ու տեղավորվում էին նախկին գործիչների և մտավորականության բնակարաններում, յուրացնում պետական հիմնարկների գույքը՝ անձնական օգտագործման նպատակով: Ռուսական բանակի զինվորներին տեղավորեցին ոչ թե զորանոցներում՝ հայ զինվորների հետ, այլ քաղաքացիների տներում, որոնք պարտավոր էին նրանց կերակրել, հագցնել, հոգալ նրանց կարիքները: Թալանում ու բռնագրավում էին ոչ միայն բնակչության տներն ու ունեցվածքը, այլև պահեստները, նույնիսկ որբանոցների ու հիվանդանոցների ունեցվածքը (պարեն, դեղորայք և այլն): Ավելի



1921թ. փետրվարի 18, հրամանատարական կազմ

դաժան էին վարվում շրջաններում: Թալանում էին հայ գյուղացու աղքատիկ վերջին պատառը: Բռնությունը դարձել էր համատարած ու ամենօրյա երևույթ: Ապազգային ու լկտի վարքագիծն այնտեղ էր հասել, որ «օգնություն եղբայրական Ռուսաստանին ու Ադրբեջանին» կարգախոսով՝ այդ թալանի մի մասն ու հայկական բանակի ռազմամթերքը ուղարկվում էր Ադրբեջան ու Ռուսաստան, որոնց բանակներն այդ օրերին ներխուժել էին Հայաստան և փորձում էին խեղդել Լեռնահայաստանի (Սյունիք) ինքնապաշտպանությունը: Այս ամենով հանդերձ, ավելանում էր նոր իշխանավորների անբավարարվածությունը: Ապազգային դաստիարակություն ստացած այդ «գործիչների» գիտակցության մեջ միայն մի բան էր դրոշմված՝ «համաշխարհային կարմիր հեղափոխության» առասպելը, որի հաղթանակի համար արդարացվում էին բոլոր միջոցները, և իշխանության՝ խաղաղ, անարյուն ճանապարհով ձեռք բերելը հակասում էր նրանց «դասակարգային անտագոնիստական պայքարի» տեսությանը. չէ՞ որ նրանց պատկերացրած «հեղափոխությունը» արյուն ու զոհ էր պահանջում: Հետևաբար նոր իշխանության նպատակն էր գրգռել հասարակության դժգոհությունը, հրահրել բախումներ ու ընդհարումներ՝ ըստ «դասակարգային» սցենարի...

Երկիրը մատնվում էր համատարած սովի ու հուսահատության: Բանտերում այլևս տեղ չկար: Բանտարկված էին հայտնի, ականավոր գործիչներից մինչև մատնության ու գրպարտության զոհ դարձած սովորական մարդիկ: Ուռնահարվում էին մարդկային բոլոր իրավունքները, արգելվել



1921թ. փետրվարի 18, զինված խումբ



Տիգրան Ծամհուր, ՀՀ Խորհրդարանի լիազորված անդամ: Չնկվել է 1921 թ. փետրվար 18-ին, Խորհրդարանի ժողովի վրա ազգային եռագույնը բարձրացնելու դրամին:

Էին ազատ խոսքն ու մամուլը, բոլոր տեսակի հավաքները, բացի բոլշևիկյան մամուլից ու ժողովներից:

Այս ամենը չէր կարող նոր իշխանությունից համաժողովրդական հիասթափություն չառաջացնել ու պատճառ չդառնալ անկախության և ազգային պետականության արժեքը հասկացած ժողովրդի արդար ցասման՝ մարդկային իր իրավունքներն ու ազգային արժանապատվությունը վերականգնելու համար... Պետք էր ընդվզել այդ համատարած անօրինության դեմ, քանի որ Հայաստանը նորից հայտնվել էր կործանման եզրին...

Եվ այդ ցասումը պտոթկաց 1921 թ.-ի փետրվարին: Խելահեղ, համազգային մի մղումով նորից գլուխ բարձրացրեց ինքնապաշտպանության գիտակցումը: Հայի ազատատենչ ոգին նորից, արդեն որերորդ անգամ մահն աչքի առաջ ունենալով, հառնեց՝ «ազատություն կամ մահ» սկզբունքով... Փետրվարի սկզբներին թալանի ու բռնությունների դեմ ընդվզումներ, միմյանցից անկախ, սկսվեցին տարբեր գյուղերում (Ախտա, Ալափարս, Արամուս, Չառ և այլն), որից հետո սկսեցին կազմակերպվել ինքնապաշտպանական մարմիններ ու ջոկատներ: Հայաստանից չհեռացած ՀՅ Դաշնակցության ղեկավարներն իրատեսորեն դեմ էին օրվա իշխանությունների դեմ զինված ապստամբության: Սակայն ստեղծված իրա-

վիճակը մղեց նրանց նորից գլխավորել ժողովրդին, շարժմանը կազմակերպված ընթացք տալ՝ աղետաբեր հետևանքներից հնարավորինս խուսափելու համար: Ստեղծվեց Հայաստանի փրկության կոմիտե, որի նախագահ ընտրվեց Ս. Վրացյանը: Վերականգնվեցին ՀՀ դեռևս պահպանված զորամիավորումները: Չորքի ընդհանուր հրամանատար նշանակվեց սպարապետ Կուռոն (Նիկոլայ Թարխանյան): Շրջաններում ու գյուղերում տեղական իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով, ժողովրդական ապստամբ ջոկատները, փետրվարի 10-ից 17-ը Հայաստանի մեծ մասը ազատագրելով բոլշևիկներից, տարբեր ուղղություններով մոտեցան Երևանին: Բոլշևիկյան իշխանությունն ու գործը, չկարողանալով իրավիճակը վերահսկել, հեռացան մայրաքաղաքից: Սակայն մինչ փախուստը նրանք հասցրեցին հերթական, աննկարագրելի ոճիրը կատարել. Երևանի բանտում գնդակահարեցին ու կացնահարեցին 50-ից ավելի գործիչների (գնդ. Գորդանյան, Համազասպ, Մակեդոն, ուսանողական շարժման գործուն մասնակից՝ Ուսանող Գրիգոր և այլն), այդ ոճիրին մասնակից դարձնելով նաև իրենց «զինակից» թաթար-աղբրեջանցիների:



Կուռո Թարխանյանը մարտական ընկերների հետ:

Փետրվարի 18-ի առավոտյան ապստամբած ջոկատները մտան Երևան: Ժողովրդի գոհունակությամբ ու ցնծությամբ այնքան մեծ էր, որ միայն շնորհավորում էին ասելով՝ «Շնորհավոր Ջատիկ», ազգային պետականության վերահաստատումը համեմատելով Տիրոջ Հարության հետ... Ամենուրեք սկսեցին ծածանվել եռագույն դրոշները: Նաև Խորհրդարանի վրա, խորհրդանշելով ազգային անկախության վերականգնումը: Անմիջապես սկսեցին վերականգնվել պետական մարմինները. Հայրենիքի փրկության կոմիտեն օժտվեց գործադիր իշխանության իրավունքներով: Վերականգնվեցին ժողովրդավարական իրավունքները (մամուլի ու խոսքի ազատություն, հասարակական կազմակերպություններ, ժողովներ, հավաքներ): Խորհրդարանական կուսակցությունները վերսկսեցին իրենց բնականոն աշխատանքը: Վերակազմակերպվում էին կապերն արտաքին աշխարհի հետ: Այս ամենն արվում էր մեծագույն դժվարությամբ ու ճիգերի գնով, ռազմական գործողությունների տարափի տակ: Զգացնել էր տալիս մասնագետների ու մարդուժի պակասը, քանի որ Հայաստանից հեռացել էին ոչ միայն պետական ու մշակույթի գործիչների, մասնագետների շոշափելի մասը, այլև բնակչության արտահոսք էր տեղի ունեցել: Բայց և այնպես, կյանքն աստիճանաբար հունի մեջ էր ընկնում:

Սակայն ուժերն անհավասար էին: Ազգային անկախությունը հնարավոր եղավ պահպանել մինչև ապրիլի սկիզբը, երբ Ռուսաստանից ուղարկված նոր զորամիավորումների օգնությամբ վերականգնվեց բոլշևիկյան բռնապետությունը: Այս անգամ արդեն պետական, կուսակցական գործիչների ու մտավորականության հետ, բռնություններից ու հալածանքներից խուսափելու համար, Հայաստանից հեռացավ ավելի քան 10.000 մարդ:

Լիարժեք հեղափոխության դասական հատկանիշներն ունեցող այս ապստամբությունը պարտություն կրեց, սակայն թողեց զգալի դրական հետևանքներ ու ազդեցություն, որոնցով էլ հենց գնահատվում է այդ հերոսական իրադարձության պատմական արժեքը.

- Փոխվեց իրեն վարկաբեկած բոլշևիկյան նախկին կառավարության կազմը: Հայաստան ուղարկվեց Ալ. Մյասնիկյանը, իր հետ բերելով Լենինի նամակները, որոնցով հրահանգում էր գոր-

The New York Times

Published: March 17, 1921

SOVIET OVERTHROWN IN ARMENIAN REVOLT

Bolshevist Invaders Driven Out, Reports to the Near East Relief Say.

Ժել տեղի պայմաններին համապետասխան, «մեղմացնել բռնությունները»:

- Հասկացան, որ հայ ժողովուրդը կարող է բռնցքով ու կյանքի գնով պաշտպանել իր ազգային ու մարդկային արժանապատվությունը:

- Ժողովուրդը նվաճեց կյանքի համեմատաբար տանելի պայմաններ: Ճիշտ է, չվերացան, բայց նվազեցին թալանն ու բռնությունները:

- Գոնե առժամանակ հանդուրժվեցին բազմակարծությունն ու թույլատրվեցին այլ կուսակցությունների գործունեությունը:

- Այս ապստամբությունը բոլշևիկյան ու խորհրդային տիրապետության տարիների միակ հաղթանակած (թեև կարճատև) ազգային ընդվզումն էր (ուրիշ փորձեր էլ են եղել, բայց ճնշվել են նույն օրը):

Կարծում ենք այսքանն էլ բավական է ճանաչելու և ճիշտ գնահատելու մեր պատմության հերոսական, բայց շատերիս անձանոթ այս էջը: Իսկ նման էջեր, ցավոք, անհամար են...

SOVIET OVERTHROWN.

(Per Press Association Copyright.)

LONDON, February 26.

The Georgian Delegation reports that the revolt in Armenia has overthrown the Soviet Government.

LONDON, 26th February.

The Georgian delegation reports that a revolt in Armenia has overthrown the Soviet Government.

ԱԴԻԲԵՉԱՆԻ ԳԵՈՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սարգիս Մանուկյան
Փորձագետ

Վերջերս սարքեր փորձագիտական կենտրոնների ու վերլուծաբանների կողմից եվրասիական մայրցամաքում ընթացող գործընթացներում լուրջ ուժադրություն է հասկացվում Ադրբեջանի դերին և նշանակությանը: Այդ գործընթացները դիտարկվում են հասկալի և ֆաղափական, սնեստական, էներգետիկ և սրանցիսային զարգացումների ենթատեսքերում: Ստորև կփորձենք դարձնել, թե արդյո՞ք Ադրբեջանը ունի ձևավորված գեոստրատեգիական ֆաղափականություն և ինչպիսի՞ն է այն, որո՞նք են այդ ֆաղափականության բաղադրիչները և հիմնական ուղղությունները, ո՞ր երկրներն ու սարածառքաններն են ընդգրկված Ադրբեջանի գեոստրատեգիական շահերի ուղեծրում և այդ երկրները ի՞նչ շահեր ունեն Ադրբեջանում:

Չնայած իր գեոռազմավարական կարևորությանը, Ադրբեջանը հանդիսանում է մոնոարտադրական ուղղվածություն ունեցող թույլ սնեստությամբ, եկամուտների անհամաչափ բաշխում ունեցող, ուժեղ կոռումպացված ղեկավարություն: Ադրբեջանը դեռևս չունի կայացած հասարակություն, առկա են էթնի-



Ադրբեջանի վարչատարածքային բաժանումներն այսօր

կական, կրոնական ու սարածառքանային հակասություններ: Ադրբեջանական վերնախավը և մսավորականությունը մշտադեպ գտնվում են ղեկավարության ղախտանման և ազգային ինֆնության ձևավորման համար անհրաժեշտ գաղափարախոսության նոր ձևերի որոնումներում: Ինստիտուցիոնալ մակարդակով հասկանալով, որ հակահայկականությունը որդես գաղափարախոսություն չի կարող անվերջ սնել այդ ռե-

սուրսը, փորձում են էներգալիզմի նկատմամբ ֆեթիշիզմի հասնող դաշտամունքը դարձնել լրացուցիչ գաղափարախոսական ներուժ: Հմտորեն օգտագործելով նավթի և գազի թեման՝ ադրբեջանական վերնախավը կարողանում է հաջողությունների հասնել ֆաղափական և սնեստական արտաքին հարաբերություններում: Սակայն այս ռեսուրսը նույնպես անստաբիլ չէ և

առաջնան համար սրանգիսային երկրի վերածումը, այսինքն «նավթագազաարտահանման մոդել» ունեցող երկրից անցումը «նավթագազաարտահանման մոդել» ունեցող երկրի: Այլ խնդիրներից են նաև հեռանկարային նավթի և գազի ռեզերվների ԵՊՀ հազարումը, նավթի և գազի նոր շուկաների կառուցումը և ԵՊՀ հազարումը, Կասպից, Սև և Միջերկրական ծովերի միջև էներգետիկ սրանգիսային խողովակաշարերի անվանագրության ադապտումը, Կասպից ծովում և Սև ծովում ծովային երթուղիների ընդլայնումը ու զարգացումը, իր սանկերային հզորությունների մեծացումը, սարքեր երկրներում ռազմավարական նշանակության օբյեկտների ձեռք բերումը: Ադրբեջանը զգնվելով Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի սարածաբերքային միջև՝ մեծ ուժադրություն է հասկացնում «Արևելք-Արևմուտք» և «Հյուսիս-Հարավ» սրանգիսային միջանցքների կայացմանը և իր սրանգիսային կարողությունների ընդլայնմանը: Այսօր Ադրբեջանը ակտիվորեն ընդգրկված է արևմտյան Transport Corridor Europe-Caucasus-Asia (TRACECA), ինչպես նաև եվրասիական «Հյուսիս-Հարավ» սրանգիսային միջանցքների նախագծերում:

Ըստ ադրբեջանական փորձագետների՝ բազմաթիվ էներգետիկ նախագծերի իրականացումը նպաստել է Հարավային Կովկասի դերի մեծացմանը, որոնք Եվրոպայի և համաշխարհային էներգետիկ անվանագրության ադապտում է մի գեոռազմավարական և գեոստրատեգիական համակարգ, որը սարածվում է Եվրոպայից դեպի Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա: Օգտագործելով իր բարենպաստ աշխարհագրական դիրքը՝ Ադրբեջանը մասնակցում է սարքեր սրանգիսային նախագծերին, իրականացնում է բազմաթիվ ռազմավարական ծրագրեր՝ ադապտվելով իր երկրի մասնակցությունը գլոբալ գործընթացներին²: Իսկ թե Ադրբեջանը որքան է նպաստել և նպաստում կոնկրետ Հարավային Կովկասի անվանագրության կայացմանը՝ այլ հարց է:

Այսօր Ադրբեջանը ձգտում է հսկողություն սահմանել սարածաբերքային ամբողջ էներգետիկաշխարհային համակարգի, ինչպես նաև աշխարհաճանաչային հումքի վերամշակման նկատմամբ: Այս և ուրիշ հավակնոս նախագծերը, այդ թվում՝ Ֆինանսաբանկային ոլորտում, սեղեկավարական սեխնոլոգիաներում, ֆինանսական և մեջալուրգիական սեկտորներում, նպաստել ունեն Ադրբեջանին ընդունելու սարածաբերքային և համաշխարհային բարձր աշխարհաբաղադրական և աշխարհաստեղծական կարգավիճակ³:

Այսօր արևմտյան ուղղություններում գործող ադրբեջանական նավթամուղներն ու գազամուղները ունեն դաշտերի հետ կապված լուրջ խնդիրներ: Չնայած, ըստ ադրբեջանցիների, համաշխարհային և եվրոպական էներգետիկների շուկայում ադրբեջանական նավթը հան-

դիսանում է «կարևորագույն գործոն», իրականում ադրբեջանական նավթը ավելի քան հեթաբր-բրություն է ներկայացնում ոչ այնքան իր մնացորդային կամ կանխատեսումային դաշտերի համար, որքան լավ ձևավորված և գործող էներգետիկաշխարհային համակարգի համար⁴: Այդ դաշտառով ադրբեջանական իշխանությունները իրենց գազի և նավթի դաշտերի վերաբերյալ անընդհատ ԵՊՀ-ում առաջնության մեջ են դնում կեղծ և մի քանի անգամ չափազանցված սխալներ:

Չգտելով լինել հասկալի «Արևելք-Արևմուտք» (կամ Մեծ Մեծաբեր ճանապարհի) միջանցքի մի հասվածք՝ Ադրբեջանը ձգտում է դառնալ հանգուցային կարևորագույն օղակ: Արևմուտքի կողմից նախագծված «Մեծ Մեծաբեր ճանապարհով» նախատեսված էր, որ 21-րդ դարում ֆաղաբաղադրության և սննդային արևմտյան մոդելը այդ միջանցքով կսեղափոխվի դեպի արևելք, իսկ նավթն ու գազը հակառակ ուղղությամբ՝ Ասիայից դեպի Եվրոպա⁵: Գեոբաղադրական փորձաքննությունների կենտրոնի սնտեզ Ա. Դուգինի կարծիքով՝ Ադրբեջանը ունի գեոբաղադրական ռազմավարության երկու ընտրություն՝ եվրասիական և եվրասիական: Եթե ասլանային հայեցակարգը ձևավորված է և ռեսուրսներով ադապտված, ադա եվրասիականը դեռևս հասունացման փուլում է, նույնիսկ սեսական մակարդակով ավարտուն չէ⁶: Այդ ենթատեսքում

2. El Khan Nuriyev, Azerbaijan and New Geopolitics of Eurasia, Eurasia Critic, July, 2008, <http://www.eurasiacritic.com/articles/azerbaijan-and-new-geopolitics-eurasia>

3. Իգոր Մուրադյան, Իրավունք de facto, Ադրբեջանի սարածաբերքային ֆաղաբաղադրությունը: Նպաստել է սննդաբեր ներթափանցել սարածաբերքային երկրներ, 27.04-29.04.2010թ.

4. Саркис Манукян, Слабые основы “мощной экономики” Азербайджана. Регион и мир 2. Институт политических исследований, 2010 Ереван

5. Paul Goble, Azerbaijan and Central Asia: From Bridge on the Silk Road to Partnership in a Globalized World, Azerbaijan in the World, ADA Biweekly: Vol. II, No. 18 (September 15, 2009)

6. Александр Дугин, Азербайджан в новой геополитической картине Кавказа. Информационно-аналитический портал «Евразия», 07.09.2005

«Արևմուտք-Արևելք» առանցքը փորձում է սաղաթել «Հյուսիս-Հարավ» առանցքը, որը նվազեցնելու է ոչ միայն Ռուսաստանի, այլևս Իրանի դերը սարածաբեր ջանում: Ադրբեջանին հասկացնում են, որ ինքը ոչ միայն կամուրջ է «Հյուսիս-Հարավ» և «Արևելք-Արևմուտք» առանցքներում, այլ նաև դասնեռ է (այսինքն՝ եթե մի ուղղությամբ այն կամուրջ է, ապա մյուս ուղղությամբ՝ դասնեռ): Նշենք, որ Ադրբեջանը ներկայումս կարողանում է հաջողությամբ մանևրել: Համենայն դեպս մի բան դարձ է, որ այս անգամ ադրբեջանցիները չեն խաղալու ո՛չ ԱՄՆ-ի, ո՛չ էլ Ռուսաստանի դեմ: Ադրբեջանի էներգետիկ ֆաղափականությունը փորձում է հավասարակշռություն ստեղծել Ռուսաստանի, Եվրամիության և ԱՄՆ-ի միջև:

Փազային զարգացումներ:

Այսօր Ադրբեջանի համար ավելի կարևոր է դառնում Փազային ֆաղափականությունը, որը կարծես երկրորդ օլան է մղում նավթային ֆաղափականությունը: Եթե մինչև 1999 թ. Ադրբեջանի էներգետիկ գեոֆաղափականության հիմքը նավթային դիվանագիստությունն էր, ապա Շահ-Գենիզի գազակոնդենսատների հանավայրի Եսհազորումից հետո Ադրբեջանը իր զինանոցում ավելացրեց նաև Փազային դիվանագիստությունը:

Ներկայումս Ադրբեջանը ունի նավթի և գազի արտահանման հետևյալ ուղիները՝ Բաֆու-Սուփսա նավթամուղը դեպի Վրաստան, Բաֆու-Նովոռոսիյսկ նավթամուղը՝ դեպի Ռուսաստան, ամենակարևոր՝ Բաֆու-Թբիլիսի-Ջեհյան նավթամուղը՝ Վրաստանով Թուրքիա, որտեղից



էլ համաբարհային Եուկաներ, Բաֆու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը (կամ Հարավկովկասյան գազամուղ) Վրաստանով դեպի Թուրքիա: Ադրբեջանի սարածքում գործում են նաև Ղազի Մագոմեդ-Գարդաբանի գազամուղը դեպի Վրաստան, Ղազի Մագոմեդ-Մոզդոկ գազամուղը՝ դեպի Ռուսաստան, որով Ռուսաստանից գազ էր ներմուծում մինչև սեփական գազով իրեն բավարարելը, և Ղազի Մագոմեդ-Ասարա-Բինանդ՝ դեպի Իրան գազամուղները: Իրանի հետ նույնպես կապված է Նախիջևան մեկուղ գազամուղով: Ամենակարևոր նախագծերը «Նաբուկոն» և «Տրանսկասպյան գազամուղ»-ն են:

Բացի «Նաբուկոնից», Ադրբեջանի գազի արտահանման ևս մի ֆանի այլընտրանքային սարքերակներ կան: Դրանք Ռուսաստանով և Իրանով անցնող նախագծերն են, որոնք, սակայն, Արևմուտքի համար ընդունելի չեն: Ադրբեջանը կարող է գազ արտահանել Հարավկովկասյան գա-

զամուղով՝ Թուրքիա-Հունաստան-Իտալիա ուղղությամբ, կամ Սև ծովով՝ դեպի Ուկրաինա, այնտեղից էլ Եվրոպա: Այս նախագիծը կոչվում է «Մոխսակ հոսք», որը կկառուի Հարավկովկասյան գազամուղը (SCP) Սուփսայի հետ: Այլ սարքերակ է հեղուկ բնական գազի (LNG) սեղափոխումը սանկերներով Սուփսայից Սև ծովով դեպի Արևելյան Եվրոպա: Ադրբեջանը կարող է օգտագործել նաև Բաֆու-Ասարա խողովակաճարը՝ Իրանին գազ վաճառելով կամ օգտագործելով swap գործարքները: Նշենք, որ Իրանի հետ ունի հինգ սարվա առաքման դայմանագիր, 2011 թ.-ին գազի ծավալը կկազմի 1 մլրդ. խոր. մ, հետագա տարիներին այն կաճի⁷: Գազի արտահանումը ռուսական ուղղությամբ նույնպես իրական է, որտեղ ադրբեջանական գազը կվաճառվի կամ կարտահանվի Մոզդոկի ուղղությամբ՝ միանա-

7. Визит Баррозу не развеял туман вокруг «Nabucco», 18/01/2011, <http://kavkasia.net/Azerbaijan/article/1295373445.php>

լով «Հարավային հոսիս» կամ «Երկնագույն հոսիս»: Որքան էլ Ադրբեջանը կանգնած է գազի արտահանման բազմաթիվ սարքերակների առջև, ամեն դեպքում Եվրոպական վեկտորը համարվում է Ադրբեջանի գազի (ինչդեռ նաև նավթի) արտահանման գերակա ուղղություն:

Վերջին տարիներին Ադրբեջանը վարել է ակտիվ գազային դիվանագիստություն: Այս տարվա հունվարին Ի. Ալիևի և Եվրահանձնաժողովի ղեկավար Ժոզե Մանուել Բառուզոյի միջև կրկնվել է «Հարավային միջանցքի համատեղ հռչակագիրը»: «Հարավային միջանցքի» նախագծի բաղադրիչներն են՝ «Նաբուկոյի», Տրանսպրիատիկ գազամուղը TAP, «Սոյսակ հոսք» և Թուրքիա-Հունաստան-Իտալիա գազամուղը ITGI: «Հարավային միջանցքով» գազի առափունը կիրականացվի 2017 թ.-ին Շահ-Դենիզի երկրորդ փուլի գործարկումից հետո: Գիտարկվում են նաև հեղուկ գազի առափուն սարքերակներ: 2011 թ.-ի ընթացքում Շահ-Դենիզի երկրորդ փուլի համար հիմնական գնորդների հետ գործարկների կնքումը կհանգեցնի նաև ITGI (Թուրքիա-Հունաստան-Իտալիա) նախագծի իրականացման որոշմանը: Նշենք, որ ITGI-ը ենթադրում է Կասպից ծովի ավազանից բացի, նաև Մերձավոր Արևելքից գազի առափուն դեղի Եվրոպա: Ներկայումս Ադրբեջանը վաճառում է Հունաստանին տարեկան 0,7 մլրդ խոր. մ բնական գազ Հարավկովկասյան գազամուղով: Հունաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև ձեռք բերված վերջին համաձայնությամբ Ադրբեջանը նույն ֆանակության գազ կվաճառի Հունաստանին առանց Թուրքիայի միջնորդու-

թյան, ծավալների ավելացման հնարավորությամբ:

Թուրքմենստանի և Ղազախստանի մասնակցությունը կասպյան գազի առափուն էներգետիկ նախագծերին Ադրբեջանի և Եվրոպայի սրանսդորսային համագործակցության նախադրյալն է: «Նաբուկոյի» գազի հիմնական մասը կադախովեն Թուրքմենստանը, Ղազախստանը և Ուզբեկստանը ստորջրյա «Տրանսկասպյան գազամուղով»: Սակայն դրա համար կա մի ֆանի խոչընդոտ, որոնցից առաջինը Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցն է, երկրորդը՝ Ռուսաստանը և Իրանը փորձում են խոչընդոտել այդ նախագծի իրականացմանը, ֆանի որ դա կնվազեցնի իրենց վերահսկողությունը կասպյան գազի արտահանման ուղիների վրա, և դա հանջում են բոլոր կասպյան երկրների համաձայնությունը: Ադրբեջանը, Ղազախստանը և Թուրքմենստանը պնդում են, որ այդ հարցի վերաբերյալ համաձայնություն պետք է սանայն երկրները, որոնց ջրային սեկտորներով է անցնելու գազամուղը:

Ռուսաստանը Ղազախստանի և Թուրքմենստանի հետ ունի դայմանագիր, որով Կենտրոնական Ասիա-Կենտրոն գազային ցանցը ընդարձակվում է Թուրքմենստանից դեղի Ղազախստան, ադա Կասպից ծովի արևելյան ափով դեղի Ռուսաստան նոր «Մերձկասպյան գազամուղի» կառուցմամբ, որը կունենա 20-30 միլիարդ խոր. մ տարեկան թողունակություն⁸: Գոյություն ունի 2003 թ. ադրիլ ամսին կնքված 25 տարվա դայմանագիր Ռուսաստանի և Թուրքմենստանի միջև, որով թուրքմենական գազը արտահանվելու է Ռուսաստան: Ռուսաստանը իր հերթին ձգտում է ադրբեջանական գազը մղել իր խողովակաշարերով դեղի Եվրոպա, որը ավելի հեշ է իրականացնել գոյություն ունեցող Գաջիկաբուլ-Մոզդոկ գազամուղով,

առավել ևս, որ Ադրբեջանն էլ դրա համար մեծ ծախսեր չի կատարի: Սակայն Ղազախստանը, Ուզբեկստանը և Թուրքմենստանը իրենց հերթին սկսել են գազամուղ կառուցել դեղի Զինաստան, որով 30 միլիարդ մ³ գազ է արտահանվելու այդ երկիր: Այսպիսով դեռ դարձ չէ, թե կարող են արդյո՞ք Թուրքմենստանը և Ղազախստանը լրացուցիչ գազ արդյունահանել «Նաբուկոյի» համար: Թեև թուրքմենական գազի դաշարների վերաբերյալ նոր սվյալները թույլ են տալիս ենթադրել, որ թուրքմենական գազը կադախովի այդ խողովակաշարը: Զնայած Թուրքմենստանը խոստում դայմանագրեր ունի Ռուսաստանի հետ, բայց միաժամանակ շահագրգռված է Տրանսկասպյան գազամուղով: «Նաբուկոյի» սադալման դեղքում ադրբեջանցիները առաջարկում են նոր խողովակաշարի կառուցում Վրաստանով և Սև ծովի հասկով դեղի Ռումինիա: Նշենք, որ «Սոյսակ հոսք» նախագիծը նույնդեպ ուժի մեջ է՝ Ուկրաինայի տարածքով: Ռումինիան Ադրբեջանին առաջարկեց տեղափոխել հեղուկ գազը Սև ծովով, որի արդյունքում անցած տարվա մայիսին Ադրբեջանի նախագահի կողմից հաստատվեց AGRI նախագիծը: Ներկայումս Բաբուն լրջորեն շարունակում է մասնակցել AGRI նախագծին:

Ռուսաստանը ներկայումս կառուցում է «Հյուսիսային հոսք», «Հարավային հոսք», «Արևելյան Սիբիր-Խաղաղ օվկիանոս» գազամուղները և «Բուրգաս-Ալեքսանդրադով» նավթամուղը: Ռուսաստանը օգտագործելով իր մոնոպոլ սրանգիսային դիրքը՝ նվազեցրեց Թուրքմենստանից և Ուզբեկստանից

8. Alexander Rahr, Sebastian Rieder, Azerbaijan's geopolitical role in the Black Sea-Caspian basin region: Challenges and opportunities, Azerbaijan Focus Vol. 1 (1), 2009.

սացվող գազի գները (թուրմենական գազի գինը իջեցրին 200 ԱՄՆ դոլարի)⁹: Բնականաբար Թուրմենսանը և Ղազախսանը փորձում են գազը ավելի բարձր գնով վաճառել: Փաստըն Ռուսասանը իր ֆաղափանությունամբ Թուրմենսանին, Ղազախսանին մղեց «Նաբուկոյի» օգտին և դեղի Չինասան գազի արահանմանը: Արդյունում՝ Թուրմենսանից և Ուզբեկսանից դեղի Չինասան գազամուղը, Տրանս-Աֆղանական գազամուղը (TAP), ինչդես նաև Ղազախսանից դեղի Չինասան նավթամուղը, բերում են Ռուսասանից Կենտրոնական Ասիայի երկրների համեմատաբար կախվածության անկման, բայց միաժամանակ՝ Կենտրոնական Ասիայում Չինասանի դերի մեծացման, որը, ըստ սարբեր փորձագետների, կարող է ավելի վսանգավոր լինել, քան կախվածությունը Ռուսասանից¹⁰:

Բնականաբար, Ադրբեջանը փորձում է գազի վաճառքի նոր շուկաներ գտնել: Որքան օտար գազի արահանման երթուղիներ լինեն, այդքան լավ Ադրբեջանի էներգետիկ անկախության համար, եթե իհարկե գազը բավականացնի (ադրբեջանական բնական գազի հաստատված և կանխատեսումային դաշարների վերաբերյալ նույնդես լուրջ կասկածներ կան):

Ամփոփելով նշենք, որ սարածաբեջանում Վրասանը և Ադրբեջանը շահագրգռված են «Նաբուկոյի», «Տրանսկասպյան գազամուղի» շինարարությամբ, ինչդես նաև «Մոլդակ հոսով» և AGRI նախագծերով: Իրանին ձեռնու է այն սարբերա-

կը, ըստ որի գազի խողովակաւար սկիզբ կառնի Իրանից: Ռուսասանը դեմ է նված նախագծերին: Ղազախսանը և Թուրմենսանը փորձում են նույնդես դիվերսիֆիկացնել իրենց արահանման ուղիները ռուսական, եվրոդական, չինական կամ հնդկական ուղղություններով միաժամանակ, դրանով հավասարակշռելով գերերությունների ճընշումները իրենց երկրներում:

Նավթային հեռանկար: Քանի որ լուրջ դժվարություններ կան ադրբեջանական նավթով ԲԹՁ-ն ամբողջովին լցնելու հարցում, ինչդես նաև կասկածներ՝ ադրբեջանական «մեծ նավթի» իրական դաշարների վերաբերյալ, ադա դազախական նավթի առաքումը «Տրանսկասպյան նավթամուղի» միջոցով Ադրբեջանի համար ավելի ու ավելի կարևոր է դառնում:

Երկաթուղային ֆաղափանություն: Ադրբեջանը փորձում է դառնալ նաև տրանզիտային և կոմունիկացիոն սարածք Եվրոդայի ադրանները և ծառայությունները ասիական աճող շուկաներ և հակառակը տեղափոխելու համար: Կարս-Ախալքալափ-Բաքու երկաթուղու կառուցումը չի հեռադնդում միայն Հայասանին մեկուսացնելու ֆաղափանություն: Այն հանդիսանալու է «Մեծ Մեռափ» կամ «Արևելք-Արևմուտք» միջանցքի մի հասվածք, որով ադրաններ կտեղափոխվեն Արևելքից դեղի Եվրոդա և հակառակ ուղղությամբ, որի արդյունում ձանադարի կրճատմամբ կնվազեն ծախսերը ծովային ձանադարիով բեռները փոխադրելու համեմատ: Կարս-Ախալքալափ-Բաքու երկաթուղին հիմնականում օգտագործվելու է հանա-

ЕВРОАЗИАТСКИЕ ТРАНСПОРТНЫЕ КОРИДОРЫ



9. Paul Goble, The Caspian Basin states: From conflicts to cooperation? Azerbaijan in the World, ADA, Biweekly Newsletter, Vol. 3, No. 20, October 15, 2010
 10. Vladislav Inozemtsev, Big politics in small spaces: what are Azerbaijan's prospects in the geopolitical arena? Azerbaijan Focus Vol. 1 (1), 2009.

հումային ատրանսֆերի, ինչպես նաև դազախական հացահատիկի և այլ ատրանսֆերի սեղափոխման համար: Այդ նույնպես կով Բաֆում դազախների և ադրբեջանցիների համատեղ ջանքերով կկառուցվի հացահատիկի լոգիստիկայի սերմնավորում:

Ադրբեջանի երկաթուղային ֆաղափականության այլ բաղադրիչ է նաև Հայաստանը Երզնգող Կարս-Նախիջևան երկաթուղային օղակի կառուցումը: Ադրբեջանը Իրանին առաջարկել է նաև իր մասնակցությունը Իմիջիլից Զուլֆա երկաթուղու կառուցմանը, ինչը Նախիջևանը ադրբեջանական էլու հնարավորություն կսա:

Իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանի սարածքով «Հյուսիս-Հարավ» միջանցի ամբողջականացմանը, ադա դրա համար մնում է կառուցել իրանա-ադրբեջանական Ղազվին-Ռաոս-Ասարա երկաթուղու հասվածքը, որը իրանական կողմի նախաձեռնությամբ դեռևս զսնվում է սանեցված վիճակում:

Ադրբեջանի գեոստրատեգիական ցանցերը և ուղղությունները

Չանայով մեծացնել Ադրբեջանի նշանակությունը սարածաբանում կառավարությունը փորձում է սնտեսադես ներթափանցել սարածաբանի երկրներ (Թուրքիա, Վրաստան, Ռուսաստան, Կենտրոնական Ասիա, Իրան, արաբական երկրներ, Բալկաններ և այլն), ստեղծելով սարածաբանային և համադարձակ սնտեսական ու ֆաղափական իրավիճակի վրա ներգործելու ունակ համակարգ¹¹: Դրա համար Ադրբեջանը օգտագոր-

ծում է էներգակիրների վաճառքից ստացված հսկայական ֆինանսական միջոցները: Ադրբեջանը հեսաֆրություն է ցուցաբերում Բաֆու-Սուփա, Բաֆու-Թբիլիսի-Չեյհան նավթամուղների բաժնետոմսերի նոր փաթեթների, ինչպես նաև «Նաբուկո» գազամուղի և նոր լայնավորվող այլ նախագծերում բաժնետոմսերի և ազդեցիկ դիրքերի ձեռք բերման նկատմամբ: Ստրև կներկայացնեն Ադրբեջանի գեոստրատեգիական ցանցերը և հեսաֆրությունները ըս երկրների և սարածաբանների:

Կենտրոնական Ասիա: Այս սարածաբանի երկրների հես Ադրբեջանը ցահագրգռված է ունենալ լավ հարաբերություններ և իրականացնել միացյալ ռեգիոնալ նախագծեր: Ադրբեջանը փորձում է դառնալ կամուրջ Կենտրոնական Ասիայի և եվրոդական երկրների միջև: Այս հարաբերություններում մեծ դեր է խաղում նաև իսլամական և թուրքական միասնության գործոնը:

Կենտրոնական Ասիայի երկրներից Ադրբեջանի համար ամենակարևոր երկրները բնականաբար Թուրմենստանը ու Ղազախստանն են, ադա Ուզբեկստանը: Այս երկրների հես ունի գեոստրատեգիական բնույթի հարաբերությունների երկու ոլորտ՝ Կասպից ծովի ավազանի բաժանումն ու ածխաջրածիներն արդյունահանումը և արսահանման խընդիրներ: Ղրզստանի և Տաջիկստանի հես հարաբերությունները դակասակիվ են, ֆանի որ նրանց հես չունի նմանաշիդ հիմնախնդիրներ, և հարաբերությունները դարգադես ունեն արսաֆին սնտեսական հարաբերությունների բնույթ:

Ամենահեսաֆրական հարաբերությունները սեղի են ունենում Ադրբեջանի և Թուրմենստանի միջև, որսեղ ընթացքը և հեսագա գարգումը կարող են ունենալ կարևոր գեոստրատեգիական և ֆաղափական հես-

ստաններ: Թուրմենստանի եկամուտների 85%-ը էներգետիկ սեկտորից է և այն բյուջեի լըման ամենակարևոր աղբյուրն է: Թուրմենստանը գազ է արսահանում Ռուսաստան, Չինաստան և Իրան: Տրանսկասպյան գազամուղով «Նաբուկոյին» միանալու դեղմում կարող է գազը արսահանել նաև Եվրոդա: Սաֆարմուրադ Նիյազովի մահից հեսո նոր նախագահ Գուրբանգուլի Բերդիմուդիանեղովը փոխեց երկրի արսաֆին սնտեսական ֆաղափականությունը: Նա հանձնարարեց Թուրմենստանի սարածքով «Արևելք-Արևմուտք» գազար խողովակաբարի կառուցումը, որը դեսֆ է ավարսվի 2015 թ.-ին և կարծես մոս 2 մլրդ. դոլար¹²: Նախաստավում է թուրմենական արևելյան հանգավայրերի գազը սեղափոխել Տրանսկասպյան գազամուղ, ադա «Նաբուկո»: 2010 թ. ընթացում Ռուսաստանի և Թուրմենստանի հարաբերությունները վասացան, ֆանի որ Ռուսաստանը իջեցրել էր թուրմենական գազի ձեռք բերման ծավալները 40 մլրդ. խոր. մից մինչև 10 մլրդ. խոր. մ՝ եվրոդական Եուկայում դահանջարկի անկման բացարտությամբ: Նախորդ սարվա դեկտեմբերին հավանաբար դրա արդյունում Թուրմենստանի նախագահը հայարարեց, որ տրանսկասպյան ստորջրյա խողովակաբարերը դեսֆ է կառուցվեն և դեսֆ է հաբվի առնվեն միայն այն երկրների կարծիքները, որոնց սարածաբանի ջրերով անցնելու են խողովակաբարերը: Ակնհայտորեն դրանով Թուրմենստանը ազդանան սվեց «Նաբուկո» նախագծին միանալու վերաբերյալ: Իրենց հերթին Ռուսաստանը և Իրանը հայարարեցին, թե

11. Իգոր Մուրադյան, Իրավունք de facto, Ադրբեջանի սարածաբանային ֆաղափականությունը: Նդասակն է սնտեսադես ներթափանցել սարածաբանային երկրներ, 27.04-29.04.2010թ.
 12. Robert M. Cutler, Turkmenistan Signals Readiness for Nabucco, Central Asia-Caucasus Analyst, Vol. 12. No.22, 24 November 2010

սրանսկաստյան խողովակաւարը ղահանջում է Կաստից ծովի ափամերձ բոլոր երկրների համաձայնությունը: Այս ամենը կարող է Թուրմենստանի և Ադրբեջանի միջև բերել կոնկրետ տայմանավորվածությունների:

Թուրմենստանի համար «Տրանսկաստյան գազամուղը» թե՛ սնտեսական, թե՛ քաղաքական իմաստով կարևոր նշանակություն ունի և որի համար հարկավոր է քաղաքական աջակցություն: Թուրմենստանը առաջարկեցին 40 մլրդ խոր. մ սարեկան գազի ծավալ Ադրբեջանին, որից 30 մլրդ. խոր. մ Հարավային Յուրտան և Հարավային Օսման նավթադաշտերից արևելում, որը կստեղծվի «Արևել-Արևմուտք» խողովակաւարով Թուրմենստանի սարածով, իսկ մնացած 10 մլրդ խոր. մ օֆշորային գոտիներից: Առաջին 5 մլրդ. խոր. մ Թուրմենստանը տասրաս է արդեն 2011 թ.-ին Բլոկ-1 օֆշորից արդյունահանել, որը շահագործվում է մալազիական «Պետրոնաս» ընկերության կողմից: Ըստ էության Թուրմենստանը նույնպես փորձում է դառնալ էներգետիկ գեոֆալակալության խաղացող: Սակայն գազի մեծ տաւարները դեռևս չեն ենթադրում մեծ խաղացող լինելու մասին: Թուրմենստանի էներգետիկ ռեսուրսները միջազգային շուկա արտահանելու նկատմամբ Ռուսաստանի մոնոպոլիան դրա աղացույցն է: «Գազդրոմը» թուրմենական տեսական «Թուրմեննեֆսգազի» 44% սեփականատերն է, որը տասախանասու է թուրմենական գազի արտահանման համար: «Գազդրոմը» ունի նաև Կենտրոնական Ասիայից դուրս եկող որոշ գազամուղների վերահսկողությունը (Կենտրոնական Ասիա

-Կենտրոն գազամուղ)՝ այստիսով մասամբ սիրադեմելով դեմի Եվրոպա մտնող հոսքերը: Ռուսաստանի, Ղազախստանի, Թուրմենստանի և Ուզբեկստանի միջև կնված շինարարության տայմանագիրը «Մերձկաստյան գազամուղի» կառուցման և «Կենտրոնական Ասիա-Կենտրոն» համակարգի վերակառուցման համար դեռևս չի նվազեցնում «Տրանսկաստյան գազամուղի» նախագծի իրականացման շանտերը:

Եվրոպացիները ժամանակին անհրաժեշտ հետաքրքրություն չցուցաբերեցին թուրմենական գազը Հարավային Կովկասով ու Թուրքիայով Եվրոպա հասցնելու նկատմամբ: Այժմ Թուրմենստանը իր ամբողջ գազը ուղղորդել է դեմի Չինաստան, Ռուսաստան և Իրան: Թուրմենստանը ֆինանսական ներդրումների և ժամանակակից տեխնոլոգիաների կարիքն ունի, ինչը կարող է ստանալ արևմտյան երկրներից, Չինաստանից, Թուրքիայից, ԱՄՆ-ից և նավթագազային միջազգային կորպորացիաներից: Արդյունում Արևմուտքը և Չինաստանը դանդաղորեն հավասարակշռում են Ռուսաստանի ազդեցությունը Թուրմենստանում: Իսկ Ադրբեջանը հնարավորություն է ստանում իրականացնել իր նդասակները կաստյան սրանգիսի համար:

Այսինքն «Նաբուկոյի» ճակատագիրը զգալորեն կախված է Թուրմենստանի դիրքորոշումից: Ըստ էության, եթե բացառենք Կաստից ծովի սարածային վեճերը, աղա արևմտյան ուղղությամբ գազ տեղափոխելու հարցում Ադրբեջանի և Թուրմենստանի շահերը համընկնում են:

Եթե մինչև վերջերս Ղազախստանը նավթը իր սանկերներով էր առաքում Կաստից ծովի վրայով Բաֆու-Թբիլիսի-Չեխյան նավթամուղ և «Տրանսկաստյան նավթամուղի» վերաբերյալ իր համաձայնությունը

հսակորեն չէր սվել, աղա ենթադրվում է, որ Ղազախստանը աղագայում ավելի է հակվելու այս նավթատարի կառուցմանը: Չնայած Ղազախստանը իր հերթին ունի արտահանման այլընտրանքներ՝ բացի Ռուսաստանից դեմի Չինաստան, նաև Իրան: Երբ մշակվի ղազախական հսկայական Քաւազան նավթի հանքավայրը, դժվար թե առանց Մոսկվայի համաձայնության դա իրականացվի: Ղազախստանի հետ Ադրբեջանը 2006 թ. կնքել է տայմանագիր, որով ղազախական նավթը ԲԹՁ-ով կարող է դեմի եվրոպական շուկա արտահանվել: Ղազախական նավթը կարող է տեղափոխվել նաև Մուխայով: Սակայն 2010 թ.-ին ղազախական Թենգիչ հանքավայրից Tengizchevroil (օմերաւսոՐ Chevron) անհամաձայնության տասձառով ադրբեջանական նավթամուղներով ղազախական նավթ չի առաքվել¹³:

Ռուսաստան: Ադրբեջանը կարևորում է ռազմավարական համագործակցությունը Ռուսաստանի հետ: Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը հասուն ոււադրություն է դարձնում հյուսիսային ուղղության վրա և ձգտում է Ռուսաստանի հետ ունենալ լայն սնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային հարաբերություններ: Երկու երկրների միջև միջսնտեսական և քաղաքական հարաբերությունները սարեցարի ընդարձակվում են: 2006 թ.-ին Մոսկվան հայտարարեց, որ Ադրբեջանի հետ հարաբերություններն իր արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է: Իսկ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը վերջերս հայտարարել է. «Մեր երկրների միջև չկան խրկողություններ: Ռուսաստանի և Ադրբե-

13. В Азербайджане увеличилась добыча нефти и газа, <http://azeritoday.com/archives/23574>

առաքողն է, սանկերներով:

Ինչ վերաբերում է բնական գազին, ադա Իրանը ունի երկու խնդիր՝ ավելացնել արտահանման ծավալները և մեծացնել իր սարածով գազի սրանգիսի ծավալները: Գազի արտահանման համար նախատեսում է նաև հեղուկ գազի և նոր գազամուղների օգտագործում: Նախագծային գազամուղներից են՝ Իրան-Պակիստան-Հնդկաստան գազամուղը (IPI կամ Խաղաղության գազամուղը), Իրանից դեղի Եվրոպա Թուրքիայի սարածով արտահանելու երկու սարքերակները՝ «Նաբուկոն» և Pars Pipeline (կամ Iran-Europe Pipeline) և Հարավային Կովկասով դեղի Ուկրաինա ու Լեհաստան գազի արտահանումը: Վերջին սարքերակի շանտերը փչ են՝ Ադրբեջանը ակտիվություն չի ցուցաբերում, «Գազդրոմն» էլ, հանձինս Ռուսաստանի, արգելակել է այդ ելքը Հայաստանի սարածով: Ըստ էության, դեղի Եվրոպա ունի մեկ ուղի՝ Թուրքիայով (Թուրքիան դրական է վերաբերվում այդ նախագծին):

Իրանի ցանկությունն է, որ թուրքմենական գազը չանցնի Տրանսկասպյան և Տրանսաֆղանական գազամուղներով: Առաջին դեղում նվազեցվում է իրանական գազի մուտքը եվրոպական շուկա: Իր հերթին Թուրքմենստանից դուրս եկող Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան-Հնդկաստան գազամուղը կասկածի սակ է դնում իրանական Իրան-Պակիստան-Հնդկաստան գազամուղի նախագիծը: Այս երկուսի իրականացումը կասկածի սակ է դնում Թեհրանի կողմից գազի արդյունահանման և արտահանման ղյանները: Այս դարագայում Իրանին ավելի ձեռնու կլինեք Մերձկասպյան նոր գազամուղի կառուցումը, որով թուրքմենա-

կան գազը կսեղափոխվի դեղի Ռուսաստան, և թուրքմենական գազի առաքումը Ղազախստանի սարածով դեղի Չինաստան, որի դայմանագիրը կնվել է 2006 թ.-ին: Եթե Տրանսկասպյան գազամուղի հարցերում Մոսկվայի և Թեհրանի շաղերը նույնն են, ադա թուրքմենական գազի հարցում ամեն մեկի շաղերը բաժանվում են՝ յուրաքանչյուրը ձգտում է իրեն ուղղորդել Թուրքմենստանի հարսությունը: Հետաքրքիր է նաև գազային ՕՊԵԿ սեղծելու և գազի շուկան ու գազափոխադրման նախագծերը վերահսկելու Ռուսաստանի, Իրանի և Քաթարի նախագծերը:

«Տրանսկասպյան գազամուղի» ձախողման շաղ դաժառներ կան, որոնք ակտիվորեն օգտագործում են Իրանը և Ռուսաստանը. Կասպից ծովի խոցելի էկոլոգիական համակարգը, սարածաբանի բարձր սեյսմավսանգությունը, Կասպից ծովի անորոշ կարգավիճակը, ջրային սարածային վեճերի առկայությունը Ադրբեջանի և Թուրքմենստանի, Ադրբեջանի և Իրանի միջև:

Իրանի շուրջ սեղծված ներկա ռազմաֆաղաֆական միջազգային իրավիճակը ձեռնու է Ադրբեջանին, ֆանի որ սահմանակցելով Իրանի հեճ՝ ձեռք է բերում ԱՄՆ-ի աջակցությունը և կարևորվում է իր գեռազմավարական նշանակությունը: Բացի այդ, սաղեցվում են իրանական գազի դեղի Եվրոպա առաքման նախագծերը: Ադրբեջանի հարաբերությունները Իրանի հեճ հիմնված չեն անկեղծ բարեկամության վրա, սակայն Բաֆուն այդ հարաբերությունները չի դնի ռիսկի սակ:

Միացյալ Նահանգներ: Ադրբեջանը ակտիվ համագործակցում է իր ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ի, ինչդեղ նաև եվրասյանիկ կառույցների հեճ սնեխական, ֆաղաֆական, էներգեթիկ և սրանադորսային անվսանգության ոլորներում: Ադրբեջանի և Միացյալ Նահանգների հարաբերությունները մնում են



Ադրբեջանի արտաքին ֆաղաֆականության հիմնական էլեմենտը:

ԱՄՆ-ի համար նախկին ԽՍՀՄ սարածիք էներգեթիկ հեճաֆրությունների կեղսրոն է, հաղկադեղ էներգառեղսուրներով հարուս Կասպից ծովի ավազանը և Ռուսաստանը: ԱՄՆ-ը ակտիվորեն ձգտում է նվազեցնել Ռուսաստանի, Չինաստանի և Իրանի ներկայությունը Կասպից ծովի ավազանում և Կեղսրոնական Ասիայում:

ԱՄՆ-ը Ռուսաստանի սահմանակից նոր ձևավորված երկրներին հայտարարելով իր ռազմավարական շաղերի ոլորտ, փորձեղ «Մեծ Մեճաֆի ձանադարիի» ժամանակակից անալոգի սեղծումը՝ հզոր սրանադորսային միջանցք, որն իր մեջ ներառում է երկաթգծերը և ավսոմագիստրալները, նավթի և գազի խողովակաշաղերը, ավիա և նավագնացության հաղորդակցման ուղիները: ԱՄՆ-ի նդաճակն է Հարավային Կովկասը ներառել իր ռազմավարական ազդեղության ոլորտում, ադա հողվել խողովակաշաղերի անվրսանգությունը, գեռազմավարական հսկողություն սահմանել Իրանի և Կեղսրոնական Ասիայի նկաճամբ, նվազեցնել Հայաստանի կախվածությունը

Ռուսասանից: Բաֆու-Թբիլիսի-Ջեյհանը ամերիկացիների համար «Մեծ Մեթաֆի ճանադարհի» մի մասն է, որը նույնպես ունի կոսրել Ռուսասանի մենա-սնորհը նավթի և գազի արտահանման ոլորտում: ԱՄՆ-ի համար կարևորը ադրբեջանական նավթամուղների և գազամուղների վերահսկողությունն ադախովելն է, ինչպես նաև Ադրբեջանին հեռու դառնելը Ռուսասանից և օգտագործել Իրանի դեմ: ԱՄՆ-ի համար Ադրբեջանը կարևոր է նաև դեղի Աֆղանստանի բազաների օդային միջանցքի ադախովելու համար:

Զնայած ադրբեջանցիները մեղադրում են ԱՄՆ-ին կրկնակի ստանդարտների համար, այնուամենայնիվ Ադրբեջանը իր հերթին նավթի և գազի արտահանման ուղիների ադախովման համար ԱՄՆ-ի կարիքն ունի որդես ռազմավարական գործընկերոջ, հասկադես Ռուսասանի կողմից ճնշումներին դիմագրավելու համար: Այդ դասճառով Ադրբեջանը ձգտում է ավելի ինտեգրվել եվրասիական կառույցներում: Ինչպես ասել է Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը. «NATO-ին միանալը վերջը չի, սակայն դա երկրի անվսանգություն մի էլեմենտն է»: Իսկ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հայտարարության համաձայն, առանց ԱՄՆ-ի նախաձեռնության և աջակցության մեծ էներգետիկ նախագծերի իրականացումը սարաձաԵրջանում և Ադրբեջանում անհնար կլինի¹⁶:

Եվրամիություն: Եվրամիությունը բնական գազ հիմնականում ստանում է Հյուսիսային ծովից, Ռուսասանից, Պարսից ծոցի երկրներից և Ալժիրից: Եվ

րամիության էներգետիկ ֆադաֆականության խնդիրներից են՝ Կասպյան էներգակիրների ստացումը Ռուսասանը Երջանցող ուղիներով, Աֆրիկայի նավթի և գազի հարուս դաԵարներ ունեցող երկրներում ֆադաֆական և սնեստական ներկայության ավելացումը, մոս ադաԵայում նաև Արկտիկայի ռեսուրսների յուրացումը: Արևմուտքը ԵահաԵրգրված է էներգակիրների մասակարարման հարցում հասնել ՕՊԵԿ-ից ու Ռուսասանից անկախության ավելի բարձր ասիճանի, մեծացնել սարաձաԵրջանի դեսուրյունների ֆադաֆական անկախությունը Ռուսասանից: Կայուն էներգամասակարարում՝ սա է Եվրամիության երկրների հիմնական մասհոգությունը: Եվրամիությունը ԵահաԵրգրված է էներգետիկ հումքի ձեռք բերմամբ և այդ դասճառով մեծ ներդրումներ է անում նավթի և գազի առաֆումը կազմակերդելու համար: ԵՄ-ն իր էներգետիկ դիվանագիտությունը իրականացնում է այդ նդասակներով սեսեղծված TASIC և TRASECA ծրագրերի Երջանակներում գործող բազմաթիվ հիմնադրամների և նախագծերի միջոցով: Սեսեղծվում են էներգետիկ և սրանսդորսային նԵանակության նոր երթուղիներ:

Ադրբեջանի Եաս նդասակներ համընկնում են Արևմուտքի նդասակներին: Կարևոր հարց է, թե ադրյո՞ք ադրբեջանական գազը չունի այլընսրանֆ Եվրոդայի համար: Եգիդսական և Քաթարի գազի դաԵարների վերաբերյալ կասկածներ կան, իսկ իրանական գազը չի կարող ֆննարկվել, ֆանի դեռ չի լուծվել միջուկային խնդիրը: Եվրոդան դիսարկում է նաև իրաֆյան գազի սեղաֆոդյումը «Նաբուկոյոլ», որը կԵրջանցի Ռուսասանը: Թեև Միացյալ Նահանգները թույլ չի սալիս իրանական գազի ֆոդիսադումը Եվրոդա, սակայն Եվրոդային չի իսանգարում կենսոնասիական գա-



զի ձեռք բերումը Ադրբեջանի սարաձեռնով: Եվրոդացիները հասկանում են, որ առանց իրանական գազի դաԵարների իրենց չի հաջողվի ինչպես հարկն է բազմակողմանի դարձնել այդ վառելանյութի մասակարարումները և նվազեցնել կախվածությունը Ռուսասանից: Թուրմենական գազը դեռևս մնում է կասկածելի սարբերակ, ֆանի որ դրա համար դայֆար է ընթանում Ռուսասանի և Զինասանի միջև: Իսկ ադրբեջանական գազը կարող է միայն մասնակի և սահմանաֆակ դեր կասարել:

Ադրբեջանը ԵահաԵրգրված է եվրոդական երկրների հես համագործակցության խորացման և սարաձաԵրջանային նախագծերի իրականացման համար: Կարևորվում է այդ երկրների հես էներգիայի մասակարարման դիվերսիֆիկացումը և էներգիայի մասակարարման անվսանգությունը: Արևմտյան Եվրոդայի երկրների հես հարաբերությունները հասկադես կարևոր են, ֆանի որ Ադրբեջանի համար հենց այդ երկրներն են նավթի հիմնական արտահանման Եուկաները: Ադրբեջանը կարևորվում է նաև Բալթյան, Արևելյան և Հարավարևելյան եվրոդական դեսուրյունների հես սնեստական հարաբերությունների առումով, որդես իր էներգակիրների ադաԵա

16. Novruz Mammadov, About the main directions in the foreign policy of Azerbaijan, Azerbaijan Focus, 2 (2), 2010

դոստենցիալ շուկա:

Ադրբեջանը բավականին ակտիվորեն իրականացնում է իր էներգետիկ հետաքրքրությունները: Արևելյան Եվրոպայում SOCAR-ը նախատեսում է կառուցել նավթի վերամշակման գործարաններ, նման առաջարկներ են ստացել Ռումինիայից, Բուլղարիայից, Լեհաստանից: Հասկամաբար կարևորում է հարաբերությունները Ռումինիայի հետ: Ռումինիան աջակցում է «Նաբուկոյին» և չի ենթարկվել Մոսկվայի դաշնաձևին «Հարավային հոսքին» միանալու համար: SOCAR-ը փորձում էր ձեռք բերել Ռումինիայի Rompetrol ղեկավարական նավթային ընկերության 75%-ը, սակայն դառնալից դադարեցրել էր KazMunaiGaz-ին, չնայած դադարեցրել էր 15 միլիոն դոլարով ադրբեջանցիներին վաճառեցին Բաթումի նավթի շերտինալը¹⁷:

Թուրքիա: Ադրբեջանում գիտակցում են, որ ադրբեջանական ղեկավարության գոյության առաջին երաշխավորը նախ և առաջ Թուրքիան է: Երկու երկրների էթնիկ, մշակութային, լեզվաբանական հարաբերությունները զարգացել, խորացել ու հասել են ռազմավարական համագործակցության մակարդակի: Թուրքիան ու Ադրբեջանը համատեղ իրենցից ներկայացնում են ուժեղ սարածաբանային խրմբավորում: Թուրքիայի կողմից Ադրբեջանի աշխարհաբաղադրական դիրքի օգտագործումը հնարավորություն է սալիս հաջողությամբ վերահսկել կարևորագույն կոմունիկացիաները, ճնշում գործադրել Կասպից ծովի ավազանի ղեկավարությունների՝ Իրանի, Ռուսաստանի, Կենտրոնական Ասիայի վրա¹⁸: Թուրքիային էներգի-

այի նոր աղբյուրներ են դրսև իր աճող սնտեսության համար: Թուրքիայի նդասակն է դառնալ եվրասիական էներգիայի առաջնան առանցք: Թուրքիայի ֆաղաֆականությունը Հարավային Կովկասում դայմանավորված է սնտեսական շահերի և գեոռազմավարական նդասակների լայն ցանցով: Թուրքիան և Ադրբեջանը սարածաբանային համագործակցության հարցերում ակտիվ են, երկուսն էլ օգտագործում են իրենց սնտեսական և էներգետիկ դոստենցիալը և ռազմավարական դիրքը:

Թուրքիայի և Ադրբեջանի հարաբերությունները վասացան բնական գազի գների և առաջնան դայմանների հակասությունների դասձառով: Անկարան ցանկանում էր գնել ադրբեջանական գազը սահմանում և վաճառել Եվրոպային ավելի բարձր գնով, իսկ իր ներքին սդառողներին վաճառել էժան գնով: Ադրբեջանը իր հերթին ուզում էր ուղղակի արտահանել ԵՄ երկրներ, որոնք էլ իրենց հերթին ուզում են գնել արտահանողից առանց միջնորդի: Ադրբեջանը 2009 թ.-ին Թուրքիայից դահանջեց վերանայել գազի գները, ֆանի որ 2001 թ.-ին կնքված դայմանագրում գազի գները բավականին ցածր էին միջազգային գներից: Թուրքերը Ադրբեջանին առաջարկեցին գազի ձեռք բերումը նախկին գնից 10%-ով ավելի, սակայն 50%-ով դակաս, ֆան ռուսներից են գնում, ինչին ադրբեջանցիները չհամաձայնեցին¹⁹: Այնուամենայնիվ 2010 թ. հունիսի 7-ին կնքվեց ադրբեջանա-թուրքական համաձայնագիրը:

Սակայն այս հակասությունները լուրջ ազդեցություն ունեցան «Նաբուկոյին», ITGI և TAP իրականացման ընթացքի վրա: Դրան հակառակ Ադրբեջանը ընդունեց AGRI

նախագիծը: Թուրքերը կսրուկ չարձագանեցին դիվանագիտական նկատառումներից էլնելով, իսկ ռուսական կողմից ռեակցիան թույլ էր, ֆանի որ ըստ ռուսների այդ նախագիծը վսանգ չի ներկայացնում իրենց շահերին: Սակայն երկարաժամկետ կսրվածով նախագիծը կազդի Ռուսաստանի և Թուրքիայի շահերի վրա: Այդ խողովակաշարը սարածաբանում փոխեց էներգիայի հարաբերությունների կառուցվածքը, ֆանի որ որոշ առումով ունի հեղափոխական բնույթ. միաժամանակ օրջանցում է թե՛ Թուրքիան, թե՛ Ռուսաստանը:

Ընդհանուր առմամբ թուրքադրբեջանական հակասությունները Ադրբեջանին վնասեցին երկու ձևով՝ նվազեցրին արտահանման եկամուսները և դանդաղեցրին Շահ-Ղենիզի երկրորդ փուլի իրականացումը, դրանով «Նաբուկոյին» ռիսկի սակ դնելով: Ճիշտ է, դա Ադրբեջանի համար հարմար առիթ հանդիսացավ իր գազը դեղի Եվրոպա արտահանելու այլ ուղիով, իսկ արդյունքում Թուրքիան այլևս մոնողով չի լինի ադրբեջանական գազի՝ դեղի Եվրոպա սրանգիսի համար: Ադրբեջանը ցույց սվեց, որ Թուրքիայից ամբողջովին կախված չէ:

Թուրքիայի համար «Նաբուկոյին» կառուցումը և հասկամաբար իրանական գազի սրանգիսը նշանակում է էներգադաշարների փոխադրման միջմայրցամաֆային հանգույցի կարգավիձակի ամրադնդում: Թուրքիան կմասնակցեք Իրանի գազի հանֆավայրերի մշակմանը և արդեն հայտարարել է այդ մսադրությունների մասին, բայց ԱՄՆ-ը կսրա-

17. Kazmunaigaz buys 75 pct of Romania's Rompetrol Group, <http://www.forbes.com/feeds/afx/2007/08/27/afx4055871.html>
18. Իզոր Մուրադյան, Թուրքիան և Հարավային Կովկասը, 14/12/2010, <http://www.lragir.am/armsrc/comments41881.html>
19. Vladimir Socor, Azerbaijan s multiple options for its gas exports, Azerbaijan Focus, 2 (2), 2010



ֆայլն է: Ադրբեջանը ձեռք է բերել Քուլավերի նավթի սերմնավառ Փոքրի մոտ: Նախատեսվում է կառուցել նաև 5-10 միլիոն տոննա սարողության նավթավերամշակման գործարան:

Այլ սարածաբաններ: Վերջին ժամանակներում, բացի վերը նշված երկրներից և սարածաբաններից, Ադրբեջանի հետևաբանությունների վեկտորը ուղղվում է նաև դեղի այլ սարածաբաններ: Չինաստանի աճող դերը և նրա դիրքի հզորացումը Եվրասիայում կարևորվում է նաև Ադրբեջանի համար: Չինաստանը ներկրվող նավթի երկու երրորդը բերում է Պարսից ծոցից՝ ունենալով լավ հարաբերություններ Սաուդյան Արաբիայի և Իրանի հետ: Քանի որ ԱՄՆ-ի դերը մեծանում է Մերձավոր Արևելքում, ադա Չինաստանը փորձում է նվազեցնել կախվածությունը Պարսից ծոցից և հակվել դեղի կասպյան էներգետիկային: Ադրբեջանը ադազայում նախատեսում է նավթ առաքել դեղի Չինաստան դազախական KazMunayGaz ցանցով:

Տնտեսական նախագծերով Ճադոնիայի ակտիվ մուտքը Ադրբեջանում ստեղծում է դարաա հող հարաբերությունների համար: Ադրբեջանը կարևորվում է նաև Հարավ-արևելյան և Հարավային Ասիայի երկրների հետ հարաբերություններում: Ադրբեջանի համար նոր հետաբանություններ

կայացնող սարածաբաններից են Պարսից ծոցի երկրները: Մեծ ուժադրություն է դարձվում նաև Մերձավոր Արևելքի երկրներին: Սիրիան նույնպես գազ կներմուծի Ադրբեջանից՝ օրական 3,5 մլն. խոր. մ ծավալով: Այն կառավարի, երբ կկառուցվի Սիրիայի և Թուրքիայի միջև գազի խողովակաաարը: Այդ խողովակաաարով Ադրբեջանը և Թուրքիան կկադվեն Սիրիայի սարածքով Լիբանանի և Հորդանանի հետ: Այսօր Սիրիան ներկրում է Եգիպտոսից օրական 1,5 մլն. խոր. մ գազ:

Ուկրաինայի նկատմամբ նույնպես ունի լուրջ հետաբանություններ, որի սարածքով կասպյան ածխաաածիները նախատեսում է առաքել եվրոդական օուկա և ևս մեկ ուղիով կադել Եվրոդան Ասիայի հետ:

Հայաստան: Այսօր Ադրբեջանը փորձում է հետևողականորեն իր գազը վաճառել նաև այնդիսի երկրների, որոնք հանդիսանում են Հայաստանի դառնակիցները, ինչդիսիք են Սիրիան, Հունաստանը, Բուլդարիան և այլն: Այդ երկրները կախված լինելով ադրբեջանական գազից, չի բացառվում, որ ադազայում Ադրբեջանի ձնուումների դասճառով սսիդված հանդես գան ոչ հայամետ գործողություններով, ինչդես դա սեղի է ունենում Վրաստանի և հաճախ նաև Ռուսաստանի դեդում:

Երկրորդ, Ադրբեջանը արունակում է հետևողականորեն մեկուսացնել Հայաստանին: SOCAR-ը փորձում է ձեռք բերել Ռուսաստանից Վրաստանի սարածքով դեղի Հա-

յաստան մսնող գազամուղի բաժնետնուերի մի մաար: Ենթադրվում է, որ այդ հասվածի խողովակները հետազայում ադամոնսաժելով կօգսագործվի դեղի Սուփսա AGRI նախագծի արաանակներում ադրբեջանական գազի սեղափոխման խողովակաաարերի վերանորոդման համար, վերաանականորեն գրկելով Հայաստանին ոուսական գազի մասակարարման հնարավորությունից: Հայաստանը դեաք է վճռականորեն և մեկընդմիոս սադայի այդ հասվածի ձեռք բերման փորձերը, դա դիսելով որդես Հայաստանի արհերին վսանգ ներկայացնող ֆայլ, բոլոր հետևանքներով հանդերձ:

Ադրբեջանը հայսարարում է, որ դեա է էներգետիկ հարցերի կամ տնտեսական հարցերի ֆադաֆականացմանը, նկատի ունենալով Իրանի և Ռուսաստանի ձնուումները, սակայն նույն հաաողությամբ էներգետիկ և տրանզիսային լծակները օգսագործում է Հայաստանի դեա:

Ադարության համար նեռնք, որ լավ ըմբռնելով աոխարհաֆադաֆական իրողությունները և հմտորեն օգսագործելով գերտերությունների հակասությունները՝ Ադրբեջանը հաաողությամբ իրականացրել է բազմաթիվ էներգատրանզիսային նախագծեր, մաակել է դադեսային այլընտրանֆային սարբերակներ, դասրասվում է իրականացնել նոր նախագծեր:

Ամփոփելով նեռնք, որ Ադրբեջանի ֆադաֆական և տնտեսական ադազան ավելի ու ավելի է կադվում նավթային, ինչդես նաև գազային գեոֆադաֆականության հետ: Բայց և այնդես, առանց կենտրոնասիական և կասպյան էներգետուուսների, Ադրբեջանի տնտեսական ադազան ադոս է:

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՆԵՆԳԱԳԱՎԵՐՆ ՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՑԱԶՆԱՄԱՐՏԵՐԸ

ԱՆԳՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1918-ԻՆ

ԱՆՐԻ ԲԱՐԲԻ

Զարմանալի չէ, որ այսպիսի գիրքը յոթանասուն տարի Հայաստանի հանրային (ազգային) գրադարանի փակ գրապահոցներում է մնացել. վերնագիրն անգամ մտարևում է պատճառը: Զարմանալին այն է, որ դեռևս 1918 թ.-ին լույս տեսած ֆրանսիացի հրատարակագրի այս վավերագրությունը բոլորովին վերջերս Ֆրանսիայում վերահրատարակվել է մեծ տպաքանակով: Նախաբանում հրատարակիչները բացահայտում են իրենց միտումը: Այժմ հայ ժողովուրդը գտնվում է նույն՝ 1918 թ.-ի իրավիճակում, երբ ազգային անկախություն էր հռչակել ու պետականությունը պահպանելու համար ստիպված եղել միաժամանակ մի քանի դրկից պետությունների դեմ պայքարազմել: 21-րդ դարակազմին հայ ժողովուրդը բարեբախտաբար պայքարազմ չի մղում, բայց եթե օրհասը վրա հասնի, ինքը դարձյալ հույսը միայն իր վրա պիտի դնի, որպեսզի, ինչպես 1918-20 թթ., չխաբվի:

Ո՞վ է այս գրքի հեղինակը: Անրի Բարբին 25 տարի (1914-1939 թթ.) եղել է ֆրանսիական «Ժուռնալ» թերթի ռազմական թղթակիցը, մասնագիտական մկրություն է ստացել Սերբիայում՝ Բալկանյան պայքարազմում: 1915 թ.-ի գարնանը, Առաջին աշխարհամարտը սկսվելուն պես, խմբագրությունը նրան Կովկասյան ճակատ ուղարկեց, և այս գործուղումը նույնպես, թերևս, նրա լրագրական գործունեության հերթական, անցողիկ փուլը դառնար, եթե սկանալու չլիներ այն սպանդին, ինչը հետո հայկական ցեղասպանություն պիտի կոչվեր: Բարբին ոչ միայն բարեխղճորեն կատարում էր թղթակցի պարտա-



կանությունները՝ պարբերաբար «Ժուռնալին» տեղեկատվություն հասցնելով երիտթուրքերի ռմիրների մասին, այլև, կյանքը վրանգելով, Վանում, Բիթլիսում, Մուշում, Տրապիզոնում, Էրզրումում, Երզնկայում վավերագրեր էր հայթայթում, գրառում այլազգի դիվանագետների ու միսիոներների վկայությունները: Փաստորեն Բարբին եվրոպացի այն եզակի լրագրողներից էր, ով անշամբ սկանալու եղավ արևմտահայության նախնիրին ու՝ չլռեց: Ֆրանսիա վերադառնալուն

պես նա իսկույն՝ 1916 թ.-ին գրեց, 1917 թ.-ին լույս ընծայեց «Սարսափի երկրում. Նահապետի Հայաստանը» գիրքը, որն այնպիսի արձագանք գրավ, որ մեկ տարի շանցած թարգմանվեց ռուսերեն, հրատարակվեց Թիֆլիսում, և հայերեն՝ այն էլ Պոլսում (արժանահիշատակ Մ. Շամիրանյանի թարգմանությամբ): Անրի Բարբիս այս վավերագիրքը վերահրատարակվել է Բեյրութում, Փարիզում, Ցեղասպանության 50-ամյակի կապակցությամբ վկայություններն առանձին՝ «Վավերագրեր 1915-ի հայկական կոտորածների մասին» խորագրով դարձյալ Փարիզում, և միայն Հայաստանում է, որ մինչև հիմա թարգմանիչների ու հրատարակիչների ուշադրությանը չի արժանացել:

Ցավոք, Հայաստանում նույն ճակատագրին արժանացավ նաև Անրի Բարբիսի հաջորդ՝ «Բոլշևիկյան նենգադավերն ու հայկական դուրսագնամարտերը Կովկասում՝ 1918 թ.-ին» գիրքը:

Հայոց ցեղասպանության փաստերը հրատարակելով՝ ֆրանսիացի հրատարակագիրը, ինչպես ինքն է արտահայտվում, «նահապետ» հայ ժողովրդի նկատմամբ պարտքը կատարած չհամարեց՝ 1917 թ.-ին Կովկաս հասավ, հարկապես Բաքվում ականատես եղավ, թե բոլշևիկյան, ապա նաև անգլիական նենգադավերը ինչպես խաբեցին հերոսաբար (իր բառն է) մարտնչող հայկական զորամիավորումներին և օրհասական պահին թուրքական ու թաթարական միացյալ զինված ուժերի դեմ մեն-մենակ թողնելով՝ նոր ազգասպանության պատճառ դարձան:

Հույս փայփայելով, որ շուրտով հնարավորություն կստեղծվի հրատարակելու ամբողջ գիրքը, «Դրօշակ»-ի ընթերցողներին եմ ներկայացնում արժեքավոր այդ վկայության վերջին գլուխը:

Գ. Զ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՁԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶՈՐԱԽՄԲԵՐԻ ԲԱՔՈՒՆ ԼՔԵԼԸ

Այս դեպքում ես հանդես եմ գալիս որպես լրատու, ռազմական համեստ թղթակից, իրադարձությունները ներկայացնում եմ այնպես, ինչպես տեղի են ունեցել: Ահա թե ինչու արժանին մատուցելով Բաքվի պաշտպանների արիությանն ու տուկունությանը՝ ավելորդ չեմ համարում նաև թուլության մի շարք դրսևորումների անդրադառնալ:

Անշուշտ, երբ ասում ենք, որ հայերը չցուցաբերեցին քաղաքացիական այն բոլոր բարձր հատ-



Անրի Բարբի

կանիչները, որ սիրով ենք դրվատում մեծաթիվ ազգերի վարքագծում, առավել ևս չպետք է մոռանանք, որ նրանք փոքրաթիվ ժողովուրդ են, մի պետությունում համախմբված չեն, հետևաբար չի եղել համահայկական հեղինակություն, իշխանություն, կենտրոնական կառավարություն: Դիշտ հակառակը՝ հայկական տարբեր համայնքներ ապրում են տարբեր, մեծ մասամբ թըշնամի ժողովուրդների, ցեղերի միջավայրում, միմյանցից հաճախ չափազանց հեռու, գրեթե առանց հաղորդակցության հնարավորության, ուստի կանոնավոր հարաբերություններ հաստատել չեն կարողանում, այսինքն նպատակային համագործակցության չեն հասնում, որին անպայման կհասնեին, եթե համախմբված լինեին նույն պետությունում, ապրեին նույն վարչակարգում: Պետք չէ մոռանալ նաև, որ այս ժողովուրդը, որ առանց այն էլ աշխարհով մեկ ցրված ու շրջա-



Բաքու, 1919 թ.



Բրիտանական բանակը, Բաֆու, 1918 թ.

պատված էր թշնամիներով, մինչև այժմ ենթարկվում էր երեք պետությունների՝ Թուրքիային, Ռուսաստանին, Պարսկաստանին, որոնք և բաժանել էին իրար մեջ երկիրը՝ ունենալով կառավարական, վարչական, գերիշխանական, քաղաքակրթական խորապես տարբեր համակարգեր:

Վերջապես և հատկապես չպետք է մոռանալ, որ Կովկասում՝ Ռուսաստանում հաստատված հայերը գտնվել են հեղափոխական խռովությունների, ընկերային բնականոն փոխհարաբերությունների վերացման, բուլշևիկյան քարոզչության, հասարակական կարգի ու քաղաքացիական պարտքի լիակատար անկման թոհուրոհում:

Նման դժվարին, դժնդակ իրավիճակում ավելին հնարավոր էր անել: Աշխարհում կա՞ գոնե մի ժողովուրդ, որ կարողանար այդ կերպ իրեն դրսևորել:

Հայերը, ճիշտ հակառակը, Կովկասի իրենց դիմադրության ընթացքում ի հայտ բերեցին ամենաանանձնական, ամենանվիրական, հայրենասիրությամբ համակված այնպիսի արիության օրինակ, որ որևէ ուրիշ ժողովուրդ հազիվ թե կարողանար դրսևորել: Հենց նրանց հայրենասիրությունն էր, որ մեր կողքին² մարտնչելու մղեց նրանց, մարտադաշտ հասցրեց, այդ հայրենասիրությունն էր, որ չնայած կազմակերպչական բութություններին, վտանգի ճակատագրական պահերին, այնուամենայնիվ, համախմբեց ու թշնամու դեմ հանեց: Վերջապես հայրենասիրությունն էր, որ ներկա պայմաններում, հիրավի աներևակայելիորեն ծանրագույն, վատթարագույն պայմաններում Բաքվում սատար եղավ և հինգ ու կես ամիս թշնամուն, ավելի շուտ թշնամիներին դիմագրավելուն նպաստեց: Չմոռանանք, որ վտան-

գը կրկնակի՝ ներսից նույնքան ահավոր էր, որքան դրսից:

Հայերի նման՝ հայրենասիրության այդպիսի ոգով համակված ժողովուրդին, ինչպիսի թուլություններ էլ ունենա, չի՛ կարելի չվստահել, չի՛ կարելի հետները հույսեր չկապել:

* * *

Առաջին ամիսներումից՝ 1918-ի օգոստոսի 4-ից հետո, քառասուն օրում 2700 անգլիացի մարտիկներ տեղակայվեցին Բաքվում, որտեղ հայերը նրանց խանդավառությամբ ընդունեցին ու ձգտեցին բոլոր ցանկությունները գոհացնել:

Այնուամենայնիվ կարևոր է նկատի ունենալ Բաքվի բնակչության տարբեր ազգությունների հոգեբանությունը, բնակչություն, որի թիվը պատերազմի սկսվելուց ի վեր ավելացել, հասել էր 350.000-ի: Սրանցից 100.000-ը թաթարներ էին, 90.000-ը՝ ռուսներ, 80.000-ը՝ հայեր, 30.000-ը՝ հրեաներ, 10-15.000-ը՝ վրացիներ և մնացածը տարբեր փոքրաթիվ ազգություններ ու եվրոպացիներ:

Թաթարները ոչ միայն ուզում էին թուրքերի գալը, այլ նաև ամեն կերպ օգնում՝ նրանց համար լրտեսություն էին անում, ռազմամթերք, սնունդ հայթայթում և այլն:

Ռուսները, չնայած Բաքվի՝ Ռուսաստանի համար ունեցած կարևորությանը, չեզոք էին ձևանում: Որոշ հակաբուլշևիկյան տարրեր նույնիսկ անհամբերությամբ էին թուրքերի հայտնվելուն սպասում, որովհետև ցանկացած իշխանություն նախընտրում էին բուլշևիկյան բռնապետությունից: Անգլիացիների տեղակայումից հետո նույնիսկ նրանք իրենց դիրքորոշումը չփոխեցին:

Հրեաները, չնայած համեմատաբար փոքրաթիվ էին, իրենց հարստությամբ ու դիրքով մեծ ազ-



Ռուսական ռազմածովայինները, Բաֆու, 1917-18 թթ.:



Բաքվի ինֆնադաճեցմանության հայ զինվորները

դեցություն ունեին: Շատերը քաշվել էին Բաքվի մերձակա թաթարական գյուղերը, այնտեղից կապ էին հաստատում թուրքերի հետ:

Վրացիները, Վրաստանի անկախության հրոշակումից հետո, իրենց համարում էին օտար երկրի քաղաքացիներ ու չեզոքություն պահպանելու պատրվակով հրաժարվում էին ռազմական գործողություններին մասնակցել:

Այսպիսով հայերը, ինչպես տեսանք, մենակ պիտի դիմագրավեին թուրքական վտանգը, որն օրեցօր ահագնանում էր:

* * *

Առաջին ճակատամարտն իսկ, որը տեղի ունեցավ օգոստոսի 17-ին, բացահայտեց անգլո-հայկական ռազմական դաշնության առաջին հակասությունը՝ մարտախմբերի կազմում, կլորացրած թվերով, 3000 զինվորներ էին կռվում, որոնցից միայն... 130-ը (հարյուր երեսունը) անգլիացիներ³:

Անգլիական սպայակույտը որոշել էր օգոստոսի 18-ին հակառակորդի վրա հարձակվել Դիդալի ուղղությամբ, բայց թուրքերը կանխեցին այդ գրոհը ու անգլիացիների ծրագրերը տակնուվրա անելով, օգոստոսի 17-ին, առավոտյան ժամը 10-ին, առաջ շարժվեցին բոլորովին այլ՝ «վուլկանի» թևով:

Կեսօրին միայն, հակառակորդի բուռն գնդակոծությունից հետո հայկական դիրքերը խառնվեցին իրար, իսկ 130 անգլիացիները՝ այսպես կոչված «Ստաֆորդցիները»⁴ գնդացիներով հաջողությամբ հետ մղեցին թուրքերի չորս հաջորդական գրոհները, ավելի քան չորս հարյուր ասկյար ոչնչացրին ու միայն հետկեսօրվա ժամը 1-ին նահանջեցին, երբ ճշտեցին, որ իրենցից միայն 30 հոգի է ողջ մնացել:

Ինչ խոսք, ճակատամարտի այս հպանցիկ

սեղմագիրն անգամ վկայում է, որ 130 անգլիացի զինվորները իսկական հերոսների պես են կռվել, ինչպես վկայում է, որ այս 130-ը ու 500 «Վարվիկցիները»⁵, որոնք հետկեսօրի ժամը 4-ին փորձեցին հակահարձակման անցնել, բայց արդյունքի չհասան, իրենց մարտական մակարդակով հայ զինվորներից բարձր էին: Բայց չէ՞ որ դա բնական է, չէ՞ որ հասկանալի է՝ անգլիացի զինվորները լավ կարգապահություն, լավ հրամանատարություն, լավ դեկավարություն ունեին, այնինչ հայկական մարտախմբերը գուրկ էին մնացել կանոնավոր բանակին հատուկ որակներից:

Ինչ խոսք, ուժերի անհավասարությունն այն միակ պատճառն էր ու հավաստի պատճառաբանությունը, որը «Դյունստերֆորսի»⁶ պարտության պատճառը դարձավ: Չորաբանակը ձախողվեց ոչ միայն Բաքվում, այլև մյուս ծրագրերն



«Վարվիկեայր» գորամիավորի 39-րդ բրիգադը Անգալիում, Բաքվից արհամիվելուց հետո:

իրականացնելիս, օրինակ՝ այն օգնության ժամանակ, որ հասցնելու էր Ուրմիայի շրջանի ջիլոններին:

Ուստի, ճշմարտությունը պահանջում է նշել, որ անգլիացիների վրա այդքան մեծ հույսեր դնելուց հետո Բաքվի պաշտպանները այնպես հուսախաբվեցին, այնպիսի խոր հիասթափություն ապրեցին, որ օգոստոսի 17-ի ճակատամարտից հետո թուրքերը, եթե փորձեին, ապա առանց գնդակ արձակելու քաղաքը կվերցնեին: Բարեբախտաբար այդպիսի քայլ չձեռնարկեցին:

Այնուամենայնիվ թշնամին շատ լավ տեղյակ էր իրավիճակին, նույնիսկ անգլիացիների ավիանումից հետո բազմաթիվ վերջնագրեր էր ուղարկում Հայկական խորհրդին, պահանջում էր, ջարդերից փրկվելու համար, հանձնել քաղաքը:

Հայերը հրաժարվեցին բանակցություններից, որոնք անօգուտ էին համարում, ու որոշեցին



Համագաստ

վերջնագրերը լռության մատնել, բացի վերջինից, որը անգլիացիների հեռանալուց մի քանի օր առաջ էին ստացել ու բացասական պատասխան տվել:

Նոր զորակցության խոստումներն ու հակառակորդի ժամանակավոր հրադադարը բարձրացրին մեր դաշնակիցների բարոյական ոգին ու ամրապնդեցին Բաբուն պահելու վճռականությունը:

Սեպտեմբերի 12-ին, գերի ընկած մի թուրք սպայից հայտնի դարձավ, որ թշնամու լայնածավալ ու վճռական հարձակումն անխուսափելի է: Իրոք, սեպտեմբերի 14-ին, գիշերվա ուղիղ ժամը 3-ին, բուռն գնդակոծություն սկսվեց, ընդ որում գրոհը հատկապես անգլո-հայկական ճակատի ձախ թևի ուղղությամբ այնքան սուր էր, որ թուրքերին հաջողվեց պաշտպանությունը ճեղքել ու բավական առաջանալ: Ճակատամարտը երկուստեք կատաղի էր, դիրքերն անընդհատ ձեռքից ձեռք էին անցնում, սվինամարտը չէր դադարում: Այնուամենայնիվ պաշտպաններն իրենց հույսը չէին կորցնում, վերջնական հաղթանակին հավատում էին, բայց տասնվեց ժամ մարտնչելուց հետո անգլիական զորախմբերը, որոնք նահանջելով հասել էին հենց նավահանգստում գտնվող օդաչուական դպրոցը (դպրոցի թռչող սարքերը ջրասավառնակներ էին), օգտվելով խավարից, նավակայան մտան ու Բետչերակովի⁷ երկու «ռոտայի»⁸ հետևից, մոտ երկու հազար հոգով, բաց

ծով դուրս եկան:

(Երբ ռուս ռազմածովայինները նկատեցին անգլիացիների հեռանալը, իսկույն սկսեցին հրետակոծել լաստանավերը: «Կարսը» սլացավ նրանց հետևից, բայց մթան պատճառով չհասավ, իսկ արկերը, որ արձակեց փոխադրամիջոցների ուղղությամբ, բարեբախտաբար թիրախին չդիպան, ջուրն ընկան: Հաջորդ օրը լաստանավերն անվնաս մտել էին Էնգելի):

* * *

Հայկական մարտախմբերը, որոնք անգլիացիների մեկնելու մասին լուր չունեին, լավ-վատ շարունակում էին դիմադրությունը: Բայց «դիկտատուրան»¹⁰ որոշեց չեզոք գերտերությունների հյուպատոսներից ու քաղաքացիներից պատվիրակություն կազմել, թշնամու հետ բանակցություններ սկսել: Գիշերվա ժամը 11-ին Հայկական խորհուրդը արտակարգ նիստ հրավիրեց, որտեղ զինվորական ղեկավարների կարծիքը լսելուց հետո եզրակացրեց, որ անգլիացիների ու Բետչերակովի զորամիավորումների հեռանալուց հետո անհնարին էր պաշտպանությունը շարունակել: Այնուամենայնիվ նիստը վճռեց, որ հայկական



Մեթասացի Մուրադ

զորամիավորումները մինչև պատվիրակության բանակցություններն ավարտելը պահեն ճակատը: Ինչ վերաբերում էր խաղաղ ազգաբնակչությանը, նրանք, ովքեր հնարավորություն ունեին ու կարող էին, պիտի փորձեին փախուստի դիմել:

Խուճապի մատնված ժողովուրդը խմբովին նավահանգիստ խուժեց, բռնությամբ լցվեց մնացած մի քանի նավերը, որոնք, հասկանալի է, այդ-

քան փախստականների համար խիստ անբավարար էին:

Սեպտեմբերի 15-ի օրը, թշնամին, որը տեղյակ չէր անգլիացիների հեռանալու, տիրող իրավիճակի մասին, բարեբախտաբար նոր գրոհ չձեռնարկեց:

Սեպտեմբերի 16-ին, գիշերվա ժամը 2-ին, մարտադաշտ ուղարկելով իր տրամադրության տակ մնացած վերջին ուժերը, Հայկական ազգային խորհուրդն իր հերթին հեռացավ... Ժամը 3-ին հայտնի դարձավ, որ պատվիրակությունը չի կարողացել անցնել ճակատային գիծն ու հետևաբար իր առաքելությունը չի կատարել: Հայկական ուժերը, ճարահատ, սկսեցին նահանջել, որի ընթացքում լուրջ կորուստներ կրեցին: Այսպես՝ 8-րդ, 10-րդ և 17-րդ գումարտակները շրջափակման մեջ ընկան ու գրեթե ամբողջովին ջախջախվեցին: Առանձին զորախմբեր, սակայն, որպեսզի խաղաղ ազգաբնակչությանը նահանջի հնարավորություն ընձեռեն և այնուհետև իրենք ևս նավահանգիստ հասնեն, անգամ Բաքվի փողոցներում շարունակում էին դիմադրությունը:

Քանի որ պատվիրակությունը չէր կարողացել բանակցել, թշնամին քաղաք մտավ ու տեսավ, որ առանց նախապայմանի արդեն բռնազավթված է:

Երեք օր շարունակ թուրքական զորամիավորումներն ու թաթար ազգաբնակչությունը թալանում ու կոտորում էին: Մոտ երեք հազար հայ՝ կանայք և երեխաներ նախճիրի գոհ դարձան:

Մոտ երեսուն հազար հայեր, որոնք կարողացել էին նավերում տեղ գտնել, փախան: Մի մասը

մեկնեց դեպի Պետրովսկ, մյուսը՝ Պարսկաստան անցնելու մտադրությամբ՝ Էնզելի:

Բայց բազմաթիվ հայ ընտանիքներ, հատկապես վերջին շաբաթների ընթացքում, ապահով պատասխարան գտնելու հույսով արդեն ապաստանել էին Էնզելիում, հայ փախստականների թիվը հասել էր տասը հազարի, տեղի բնակչությունն էլ նկատի ունենալով՝ ուտելիքը հազիվ թե բավականացներ: Ահա թե ինչու, երբ փախստականներով լեփ-լեցուն նավերը Էնզելիին մոտեցան, անգլիական զինվորական իշխանությունները գնդակոծության սպառնալիքով, արգելեցին նավահանգիստ մտնել: Խեղճ հայերը, որոնք իրենց փրկված էին համարում, ստիպված էին հետ շրջվել, այլ ափերում բախտ փորձել:

Ցավոք, ահա թե պատերազմական հանգամանքների ու դաժան պարտադրանքների պատճառով ինչպես ավարտվեցին Բաքվի փրկարշավի գործողությունները:

Ահա թե ինչպես ավարտվեց թուրքերի դեմ հայերի մղած կենաց-մահու պայքարը, սահմանափակ ուժերով, անկազմակերպ, բայց, ինչ խոսք, հերոսական պայքարը, որը չնայած թերություններին ու թուլություններին, բացահայտեց այս նահատակ ժողովրդի հոգեկան կորովը, այս փորաթիվ ժողովրդի, որը չնայած իր տկարությանը, այնուամենայնիվ միակը եղավ, որ վեր պարզեց նահանջող ռուսների ձեռքից ընկած դրոշը:

Կարելի՞ է ավելի ողբերգական խիզախում պատկերացնել:

Թարգմանությունը՝ ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆԻ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը հայ կամավորականների՝ Համազասպի, Սեդուհի, Մուրադի մարտիմբերի մասին է (ծանոթագրությունները թարգմանչինն են):
2. Եռյակ համաձայնության երկրներին՝ Ֆրանսիային, Անգլիային, Ռուսաստանին:
3. Ընդգծումը հեղինակինն է:
4. Անգլիական համանուն ֆաղափի զինվորները:
5. Անգլիական համանուն ֆաղափի զինվորները:
6. Բառացի՝ «Դյունստերուժեր». անգլիական այդ զորամիավորումներն այդպես էին կոչվում իրենց գեներալի՝ Դյունստերվիլի անունով:
7. Ռուս գնդապետ, որն իր կազակներով օգնության էր եկել Բաքվի ղաթաղաններին, ստանձնել ընդհանուր հրամանատարությունը:
8. «Վաեսի»՝ Բաքվի ղաթաղանությունը նկարագրելիս Բարբին հաճախ է ռուսական ռազմական բառերը օգտագործում:
9. Բաքվի նավահանգիստը ղաթաղանում էին էսեռները, որոնք ֆաղափը թուրքերին չհանձնելու կողմնակից էին:
10. Բոլշևիկների փախուստից հետո Բաքվում ստեղծվեց ժամանակավոր կառավարություն (1918 թ.), որի գործադիր կոմիտեի նախագահը Ալեքսանդր Առաքելյանն էր, հինգ անդամներից երկուսը դաշակցականներ էին, երկուսը՝ սոցիալ-դեմոկրատներ, մեկը՝ էսեռ:

Ինչո՞ւ ենք մեր աղավաղված բարեքր բերում եթեք և ի՞նչ հերոսների օրինակով ենք ֆաղաֆացի ձևավորում: Արդյո՞ք Խաչագողի ձախողված կերտարի ուղերձին են սղասում մեր հասարակությունն ու երհասարդությունը: Ինչո՞ւ են Երուսականոյն, ոչ հաջողված բեմադրիչների մեկնաբանությամբ կեղծ արժեքներ փոխանցվում հասարակությանը: Ի՞նչ ենք Երուսական... Չէ՞ որ Հանրայինը միտնալ հեռանկարի խնդիր լուծի՝ ի՞նչ Հայաստան ենք ուզում ունենալ, ո՞ր ենք գնում, ի՞նչ համագլխային Երուսական ենք համախմբվում: Այս ամենն անելու համար հեռուստատեսության գեներալ ամենաարդյունավետն է ու դիտուկը, ինչո՞ւ չանել... Ի վերջո, Հանրայինը իր արբանյակային հեռարձակմամբ նաև համահայկական հեռուստատեսություն է և ղարգաղես Հայաստանի դեմքը, և սա լուրջ ղասախանություն է...

Անառարկելի է, որ երկրում ներհասարակական բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտ կա, և բոլորիս հեռ միասին իր մեղքի բաժինն ունի նաև Հանրայինը:

Բացառիկ կարևորելով Հանրայինի դերակատարությունը երկրում հասարակական հանդուրժողականության, մասսայական լրատվության միջոցի նկատմամբ հավաստի ու վստահության վերականգնման ուղղությամբ, ցավով եմ փաստում, որ ընկերությունը Երուսական է իր վնասակար հավասարմության մեղանչել անաչառության հարցում, իսկ հասարակությունը հեռուներ է փնտրում, անկողմնակալ սեղեկասվու-



թյուն, ու ելքերի ոռոնման մեջ հաճախ մոլորվում:

Հանրայինը լուրջ անելիքներ ունի իր հասարակական-ֆաղաֆական հաղորդումների ոռակն ու անկողմնակալությունը բարձրացնելու խնդրում Եթե՝ անկեղծ, այդդիսիք գրեթե չկան, իսկ եղածներն էլ, ցավով արհի, Երուսական են կեսձրձմարտության կեցվածքը՝ չարսահայտելով հասարակական կարծիքների ու հայացքների ողջ բազմազանությունը:

Ոչ ղակաս կարևոր մեկ խնդիր Երուսական. բոլորովին հակված չեմ և արդար չէ այս խնդիրը միայն Հանրայինինը համարելը, բայց գտնում եմ, որ կարող ենք Հանրայինից ակնկալել, որ կրթական, դաստիարակչական ծրագրերին հասկացվող ծավալները մեծանան՝ հաճվի առնելով, որ կրթությունը մեր երկրի ղարգացման գերակա, ոռազմավարական ուղղություններից մեկն է: Գիտելիքահեղձ հասարակության մասին հրաղարակային հաստատումներ է անում կառավարությունը ու Երուսական Հանրայինի սերիալաղասումը:

Եթեքի մԵակուրային հերուները Երուսական են մնալ Երուսականի «չակերտար սասղերը», որ համառորեն ամենուր են: Ո՞ր են մԵակուրային իրական արժեքներն ու դրանց կերտողները, մԵակուրային իրական սղասավորները, ոռոնք լուր, անմնացող ու անհասույց իրենց գործն են անում, ազգային գիտակցություն ու արժեհամակարգ ձևավորում:

Այս մԵահոգությամբ հիմնաղրվեց «Արարատ» հեռուստատեսությունը, և իմ խորին համոզմամբ՝ սղաս ձանաղարհով գնացիք: Հ1-ը ազատվեց մԵակուրային հաղորդումներից, ըստ իրենց՝ ցածր վարկանիցային հաղորդումներից, դրանք օսարելով «Արարատ», և այսօր հսակ չէ վերջիններիս ձակասագիրը: Հսակ չէ նաև «Արարատի» ձակասագիրը: Իմ խորին համոզմամբ՝ Հ1-ը միտն ազատ լինի վարկանիցային մոլուցքից և այդ բարոյից: Նա ղեռության և հասարակության ղասվերն է կատարում և ուրեմն բարձր ազգային խնդիրներ ու ձաԵակ ղարտարելու առաղելություն միտն սսանձնի, ոչ թե էժան Երուսակայի ղահանջը բավարարելու խնդիր:

Առաջիկայում 2012 թ. ընկերություններն են, և ֆաղաֆական մթնոլորտն ու գունաղանակը գնաղով Երուսական են: Ուզում եմ հավասաղ, որ Հանրայինը կգիտակցի իր իրական դերակատարությունն ու ղասախանասվությունը, կառաջնողովի անկախության և անաչառության սկզբունքով, արսահայտելով հասարակության բոլոր Երուսականի հույզերն ու սղասումները:



ԱԹԵՆՔԻ

ՊԵՏԱԿԱՆ

ԳԱԳԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ

ՊԵՐԻԿԼԵՍԻ ԵԼՈՒՅԹՈՒՄ

Ար. Ս. Եղիազարյան

Պատմական գիտությունների թեկնածու

Պերիկլեսը (490-429 թթ. մ.թ.ա.) եղել է Աթենական պետության հայտնի պետական գործիչ, աթենական դեմոկրատական կուսակցության ղեկավար, հռչակավոր հռետոր և զորավար:

Մ.թ.ա. 443 թ. Պերիկլեսն ընտրվել է Աթենական պետության ստրատեգոս¹, իսկ այնուհետև՝ մինչև 430 թ., անփոփոխ վերընտրվել այդ պաշտոնում: 429 թ.՝ մեկամյա ընդմիջումից հետո, կրկին ընտրվել է, սակայն շուտով մահացել համաճարակից:

Պերիկլեսը հզորացրել է Աթենական պետության նավատորմը, կառուցապատել Աթենքը, որը նրա օրոք հասել է տնտեսական, մշակութային և ռազմական մեծ հզորության:

Պերիկլեսի իշխանության շրջանը պատմագիտության մեջ հայտնի է որպես «Պերիկլեսի դարաշրջան»: Վերջինս ոչ միայն Աթենքի և Հունաստանի, այլև անտիկ պատմության մեջ նշանավորվում է հասարակական կեցության և պետա-

կան կառավարման բարձրագույն զարգացմամբ: Պերիկլեսի օրոք այդ ասպարեզներում ի մի են բերվում այն բոլոր արժեքները, որոնք ստեղծվել էին Աթենքում նախկին 2 դարերի ընթացքում: Վերջնականապես ձևավորվում է հունական պետականության գլխավոր բաղադրիչը՝ պոլիսը, որն իրենից ներկայացնում էր հասարակական կազմավորման նոր ձև:

Հունաստանում մ.թ.ա. 431-404 թթ. տեղի ունեցավ Պելոպոնեսյան պատերազմը, որը միմյանց դեմ մղում էին Աթենական ծովային միությունը՝ Աթենքի, և Պելոպոնեսյան միությունը՝ Սպարտայի գլխավորությամբ:

1. Ստրատեգոսը հին հունական դոլիսներում զինված ուժերի գերագույն հրամանատարն էր՝ ղեկավարում ֆինանսների օգտագործման և իր հրամանատարությամբ գործող զորքերում դասասան ժողովուրդի լիազորություններով օժտված: Իրավունք ուներ նաև զբաղվելու արտաքին հարաբերություններով այն սահմաններում, որոնք անհրաժեշտ էին նրա ղեկավարած զորքի առջև դրված խնդիրների լուծման համար:

Ստորև բերված էլույթը Պերիկլեսն արտասանել է աթենացիների և օտարերկրացի հյուրերի առջև մ.թ.ա. 430 թ.² Պելոպոնեսյան պատերազմի ճակատամարտերից մեկում զոհված զինվորների թաղման ժամանակ²: Ելույթում հռետորը զոհվածների քաջագործությունները բացատրում է հայրենի քաղաքի մեծությամբ և աթենական հարուստ ժառանգության պաշտպանության անհրաժեշտությամբ, որից էլ ծնվել է զոհվածների հայրենասիրությունը: Այն կարելի է բաժանել մի քանի շերտերի, որոնցից են աթենացու հարգալից մոտեցումը նախնիների և նրանց ավանդույթների նկատմամբ, աթենական պետական դեմոկրատական կարգի բացարձակացումը, հասարակական կյանքում միջանձնային հարաբերություններում բարոյականության կարևորումը, զոհվածներին հարգանքի տուրք մատուցելը և նրանց ընտանիքների համար հոգ տանելը:

* * *

Սույն ակնարկում ներկայացնում ենք Պերիկլեսի էլույթը՝ ըստ դրանում ամրագրված ուղղությունների և գաղափարների՝ մեր խոսքը թողնելով ստվերում:

* * *

«Ինձանից առաջ այստեղ էլույթ ունեցող հռետորների մեծամասնությունը գովերգեց Օրենսդրին³, որը ներմուծեց զոհվածների պատվին կազմակերպվող թաղման արարողության ժամանակ էլույթ ունենալու սովորույթը, քանի որ մարտի դաշտում ընկած հերոսներին պատիվներ մատուցելը հրաշալի սովորություն է: Ես գերադասում եմ հերոսական սխրանք գործած քաղաքացիներին պատիվներ մատուցել հենց գործով, այնպես, ինչպես տեսնում եք այժմ՝ քաղաքի կողմից կազմակերպված այս թաղման արարողության ժամանակ», - *այսպես է սկսում իր էլույթը Պերիկլեսը:*

«Իմ կարծիքով, արդարացի չէ այսքան հերոսների գնահատականը կախման մեջ դնել մեկ մարդու էլույթի լավ կամ վատ լինելուց: ...հռետորի համար դժվար է գտնել մատուցված ծառայու-



Աթենք

թյունների իրական չափը»: Հայրենի պետական գործիչը դրանով ընդգծում է պետության ղեկավարի բարոյականությունը, բարոյականություն, որ սահմաններ է գծում իր կրողի համար այնպիսի մի իրադարձության ժամանակ, ինչպիսին հայրենիքի համար զոհվածների թաղման արարողությունն է: Այլ է, սակայն, ավանդույթը, որն օրենքի ուժ ունի և որը պահանջում է պետության ղեկավարից՝ գրնելու համապատասխան խոսքեր. «Բայց քանի որ մեր նախնիները այս սովորությունը համարել են գովելի, ես ևս, որքան կարող եմ, ենթարկվելով օրենքին, կփորձեմ բավարարել յուրաքանչյուրի ցանկությունը և համոզմունքը»:

Եվ Պերիկլեսը գրնում է համապատասխան խոսքերը. «Ամենից առաջ ես կսկսեմ նախնիներից: Չէ՞ որ այս իրադարձության մեջ արդարությունը և արժանապատվությունը պահանջում են տուրք մատուցել նրանց հիշատակին: Մեր նախնիները մշտապես ապրել են այս երկրում և, փոխանցելով այն սերնդե սերունդ, իրենց քաջությամբ պահպանել են նրա ազատությունը մինչև

2. Фукидид, История, пер. и примеч. Г. А. Стратановского, отв. ред. Я. М. Боровский (Серия «Литературные памятники»). Л., «Наука», 1981.

3. Խոսքը վերաբերում է աթենացի առաջին օրենսդիրներից Դրակոնին, որը մ.թ.ա. 621 թ. ստեղծեց աթենական առաջին գրավոր օրենքները:



Պելոդոնեսյան ճակատամարտ

մեր ժամանակները: Եվ եթե նրանք արժանի են գովերգման, ապա առավել արժանի են դրան մեր հայրերը, որոնք ավելացնելով նախնիների ժառանգությունն իրենց գործերով՝ ստեղծեցին այն մեծ տերությունը, որին այժմ տիրում ենք մենք՝ ներկայիս սերունդը: Եվ նրա հզորությունն ավելի ամրապնդեցինք մենք ինքներս, որ այժմ հասել ենք հասուն տարիքի»:

Նա ընդգծում է Աթենական պետության հարստության զաղափարը, որը խարսխված էր սերունդների անընդհատ պայքարի վրա՝ սեփական պետության հզորացման համար: Նախնիների, հայրերի և Պերիկլեսի սերնդի անընդհատ պայքարը փվեց իր պրուդենտները. «Մենք մեր քաղաքը դարձրեցինք լիովին ինքնուրույն՝ ապահովելով անհրաժեշտ ամեն ինչով՝ թե՛ պատերազմի և թե՛ խաղաղ ժամանակների համար: Պատերազմական սխրանքները, որոնք թե՛ մենք և թե՛ մեր հայրերը գործեցինք՝ նվաճելով նոր տարածքներ կամ ամուր պաշտպանվելով... պատերազմներում, բոլորին հայտնի են, և ես կըրկին չեմ պատմի դրանց մասին»:

Ըստ Պերիկլեսի՝ նախնիներին, հայրերին և սեփական սերնդին պայքարի մղողը հայրենի պետությունն է՝ իր դեմոկրատիական կարգերով: Ուսրի և անհրաժեշտ է թաղման արարողությունը մասնակից քաղաքացիներին և հյուրերին ներկայացնել այդ կարգերը. «Մինչև թաղվող ընկած-

ներին գովերգելն ուզում եմ խոսել մեր քաղաքի կառուցվածքի և մեր ապրելակերպի մասին, որոնք էլ հասցրել են մեզ այսօրվա մեծությանը: Մեր պետական կառուցվածքի համար մենք օրինակ չենք վերցրել որևէ օտարերկրյա կարգ: Բանի որ մեր քաղաքը դեկավարում է ոչ թե մարդկանց խումբը, այլ ժողովրդի մեծամասնությունը, մեր պետական կառուցվածքն անվանում են ժողովրդահիշխանություն»:

Պերիկլեսը համոզված է, որ աթենացի զինվորների քաջությունը և հայրենասիրությունը բխում են պետության մեջ յուրաքանչյուր աթենացու համար նախատեսված հնարավորություններից. «Բոլորն անձնական գործերում օրենքներով ունեն հավասար իրավունքներ: Ինչ վերաբերում է պետական գործերին, ապա պետական պատվավոր պաշտոնների համար յուրաքանչյուրը ներկայացվում է ըստ իր արժանիքների, երբ նա աչքի է ընկել անձնական քաջությամբ և ոչ թե որևէ խավի պատկանելու պատճառով: Աղքատությունը, անհայտ ծագումը կամ հասարակական ցածր դիրքը չեն խանգարում մարդուն զբաղեցնել պատվավոր պաշտոն, եթե նա ընդունակ է ծառայություն մատուցել պետությանը»:

Այնուհետև կարևորվում են միջանձնային հարաբերությունները. «Մեր պետության մեջ մենք ապրում ենք ազատ և ամենօրյա կյանքում խուսափում ենք փոխադարձ կասկածներից, մենք վատ չենք վերաբերվում մեր հարևանին, եթե նա իր վարքում հետևում է անձնական հակումներին, և նրա նկատմամբ չենք արտահայտում մեր, թեև անվնաս, բայց դժվարությամբ ընդունելի դժգոհությունը: Մեր անձնական հարաբերություններում մենք համբերատար ենք»:

Ապա Պերիկլեսը ներկայացնում է իշխանություն-քաղաքացի, քաղաքացի-օրենք հարաբերությունները. «Մենք չենք խախտում օրենքները՝ գլխավորապես դրանց նկատմամբ հարգանքից ելնելով, և ենթարկվում ենք իշխանություններին և օրենքներին, որոնք հատկապես կոչված են պաշտպանելու զրկվածներին...: Օրենքների խախտումը բոլորս համարում ենք անոթալի»:

Պերիկլեսը համոզված է, որ ամուր պետու-

թյան կարևոր քաղաքիչը բարեկեցիկ ընտանիքն է. «Մենք հորինել ենք բազմատեսակ զվարճություններ՝ աշխատանքից և հոգսերից հոգին հանգստացնելու համար, տարեցտարի մեզանում կրկնվում են խաղերն ու հանդիսությունները: Ընտանեկան բարեկեցությունը հաճույք է պատճառում և օգնում ցրել առօրյա կյանքի հոգսերը»:

Ըստ Պերիկլեսի՝ հզոր պերսականության առկայությունն է, որ Աթենական պերսությանը բերել էր նաև համաշխարհային համարում. «Ամբողջ աշխարհից մեր քաղաքի մեծության և նշանակության արդյունքում բերվում և մեր շուկա է մտնում ամեն անհրաժեշտը, և մենք օգտվում ենք օտարերկրյա բարիքներից նույնքան ազատորեն, որքան մեր երկրի արտադրանքից»:

Ինչ վերաբերում է պատերազմական հարցերին, ապա «մենք ղեկավարվում ենք այլ կանոններով, քան մեր հակառակորդները: ...մենք հենվում ենք ոչ այնքան պատերազմական պատրաստությունների և խորամանկության, որքան գլխավորապես մեր անձնական արիության վրա: Այն ժամանակ, երբ մեր հակառակորդները դաստիարակության իրենց ձևով ձգտում են վաղ մանկությունից ամուր կարգապահությամբ ամրապնդել պատանիների քաջությունը⁴, մենք ապրում ենք ազատ, առանց այդ դաժանության, բայց և այնպես քաջորեն հավասար պայքար ենք մղում մեզ հավասար հակառակորդի հետ: ...եթե մենք պատրաստ ենք դիմագրավել վտանգին մեզ հատուկ ապրելակերպից ելնելով և ոչ թե ծանր վարժությունների նկատմամբ հակում ունենալու պատճառով և այդ ընթացքում հենվում ենք ոչ թե օրենքի ոգու, այլ ի ծնե ունեցած քաջության վրա, ապա հենց դա է մեր առավելությունը: Մեզ կանխավ չի անհանգստացնում գալիք վտանգների միտքը, այլ դրանց ենթարկվելով՝ մենք ցուցաբերում ենք ոչ պակաս քաջություն, քան նրանք, ովքեր անընդհատ ծանր աշխատանք են կատարում: Եվ դրանով, ինչպես նաև շատ այլ բաներով, մեր քաղաքը զարմանք է հարուցում»:

Անձնական արիություն, ի ծնե ունեցած քաջություն,- ահա՛, թե ինչպիսին է Աթենական պերսության քաղաքացիների դաստիարակությունն ըստ Պերիկլեսի:



Աթենացի զինվոր

Այնուհետև Պերիկլեսը խոսում է աթենացիներին և Աթենական պերսությանը բնորոշ կարևոր արժեքների մասին. «Մեր հակումը դեպի գեղեցիկը մենք զարգացնում ենք առանց վատնելու և տրվում ենք գիտությանը՝ առանց ոգու ուժին վնաս հասցնելու: Հարստությունը մենք գնահատում ենք միայն այն բանի համար, որ այն օգտագործում ենք արդյունավետորեն և ոչ թե դատարկ ինքնազովության համար: Աղքատ լինելը խոստովանելը մեզանում ոչ ոքի համար անոթալի չէ, ավելին՝ մենք անոթալի ենք համարում, երբ մարդը չի ձգտում աշխատանքով ազատվել դրանից: Միևնույն մարդիկ մեզանում երբեմն միաժամանակ զբաղված են լինում և՛ անձնական, և՛ հասարակական աշխատանքներով: Բայց մյուս քաղաքացիները նույնպես, չնայած այն բանին, որ յուրաքանչյուրը զբաղված է իր արհեստով, նույնքան լավ հասկանում են քաղաքականությունից: Չէ՞ որ միայն մենք ենք, որ մարդուն, որը չի զբաղվում հասարակական գործունեությամբ, համարում ենք ոչ թե անբարեհույս քաղաքացի, այլ անօգուտ բնակիչ»:

Պերիկլեսն աթենական սովորույթներից հայտնաբերում է իշխանություն-քաղաքացի-

4. Խոսքը Մոդարայի և այնտեղի դաստիարակչական բարերի մասին է:



THE DOOM OF AGIS KING OF SPARTA

ներ հարաբերությունները՝ կարևոր որոշումներ կայացնելու գործընթացում. «Մենք չենք կարծում, որ բաց քննարկումը կարող է վնասել պետական գործերի ընթացքին: Ընդհակառակը, մենք համոզված ենք, որ սխալ է պետք եղած որոշումն ընդունել առանց կողմ կամ դեմ ելույթների միջոցով նախնական պատրաստության: Ի տարբերություն ուրիշների, մենք՝ ունենալով քաջություն, նախընտրում ենք դրա հետ միասին նախապես հիմնավոր քննել մեր ծրագրերը, որից հետո միայն գործի դիմել: Մյուսների մեջ անհարգալից սահմանափակությունը ծնում է անհաշվենկատ քաջություն, իսկ սթափ հաշվարկը՝ անվճռականություն: Իսկապես քաջ պետք է համարել միայն նրանց, ովքեր ամբողջական պատկերացում ունեն ինչպես պարտության, այնպես էլ հաղթանակի մասին, և հենց այդ պատճառով էլ չեն խուսափում վտանգներից»:

Եվ ահա Պերիկլեսի եզրակացությունը. «Մի


խոսքով, ես պնդում եմ, որ մեր քաղաքը համայն Հելլադայի դպրոցն է, և կարծում, որ մեզանից յուրաքանչյուրն ինքնուրույն կարող է հեշտությամբ դրսևորել սեփական անձն ամենատարբեր կենսապայմաններում: Եվ այն, որ իմ պնդումն այսօրվա իրավիճակում ոչ թե դատարկ ինքնագովեստ է, այլ պարզ ճշմարտություն, հաստատում է մեր քաղաքի հզորությունը, որին մենք հասել ենք մեր ապրելակերպի շնորհիվ: Մեր քաջությունը մեր առաջ բացել է բոլոր ծովերն ու երկրները և ամենուր մեր պարտություններին և հաղթանակներին նվիրված հուշարձաններ է կանգնեցրել»:

«Այսպիսի քաղաքի համար են իրենց կյանքը հերոսաբար տվել այս զինվորները, որոնք անհնար են համարել հայրենիքից զրկվելը, և կենդանի մնացածներից յուրաքանչյուրն անկասկած ուրախությամբ կտուժի հանուն նրա», - համոզված է Պերիկլեսը:

Պերիկլեսը նշում է, որ ներկայացնելով Աթենքի կարգերը՝ ինքը ցանկանում է «ցույց տալ, որ մեր պայքարում մենք պաշտպանում ենք շատ ավելին, քան մարդիկ, որոնք զուրկ են նման ժառանգությունից: Իմ ելույթում գովերգելով ընկածների գործերը՝ ես բերեցի նրանց հերոսականության ակնհայտ ապացույցներ: Այսպիսով, իմ գովերգման խոսքի ամենակարևոր մասն արդեն ասվեց: Չէ՞ որ ամեն բանով, որ ես փառավորեցի այստեղ, մեր քաղաքը պարտական է այս մարդկանց և հերոսների, ինչպես նաև նրանց նմանների սխրանքներին»:



Ապա հռետորը վերջապես անդրադառնում է գոհվածներին. «Ամբողջ Հելլադայում, թերևս, քիչ կգտնվեն մարդիկ, որոնց փառքը նույնչափ համապատասխաներ նրանց գործերին: Կարծում եմ, որ այս զինվորներին բաժին հասած ճակատագիրը հանդիսանում է առաջին նշանը և վերջին ապացույցը մարդու հերոսականության, որպես նրա կյանքի փառավոր ավարտի: Չէ՞ որ նույնիսկ այն մարդկանց, որոնք նախկինում չէին կատարում իրենց պարտականությունը, կարելի է արդարացում գտնել, եթե նրանք քաջորեն պայքարում են հայրենիքի համար: Իրոք, բարությանը ջնջելով չարը, նրանք դրանով ավելի օգուտ են բերել քաղաքին, քան նախկինում վնասել են նրան իրենց ապրելակերպով: Իսկ այս հերոսները չկորցրեցին քաջությունը, արհամարհեցին հարստության վայելքը կամ հետագայում հարստանալու հույսը և չնահանջեցին նաև վտանգի առջև: Թշնամուց վրեժ լուծելը նրանք ամեն բանից բարձր դասեցին՝ հայրենիքի համար կյանքը նվիրելը համարելով մեծագույն բարիք: Մեծագույն վտանգին դեմ հանդիման նրանք ցանկացան հակահարվածել թշնամուն՝ արհամարհելով ամեն ինչ, և հաղթել՝ ապավինելով միայն սեփական ուժերին: Ավելի արժանապատիվ համարելով մտնել մահու պայքարի մեջ, քան թե նահանջել՝ փրկելով կյանքը, նրանք խուսափեցին վախկոտության մեջ մեղադրվելուց, և վճռական պահին կյանքին հրաժեշտ տալը նրանց համար թե՛ վախի վերջն էր և թե՛ հետմահու փառքի սկիզբը: Այս զինվորներն ազնվությամբ կատարեցին իրենց պարտքը հայրենի քաղաքի առաջ՝ նրա համար տալով կյանքը: Իսկ կենդանի մնացած բոլորին հարկ է աղոթել աստվածներին՝ ավելի երջանիկ ճակատագրի համար, իսկ թշնամիների նկատմամբ դրսևորել ոչ պակաս քաջություն, քան ննջեցյալները: Թո՛ղ բոլոր քաղաքացիները ոչ միայն հռետորի խոսքերից դատեն, թե որքան հրաշալի է հանուն քաղաքի թշնամուն հակահարվածելը: ...թող ձեր հայացքների առաջ ամեն օր հառնեն մեր քաղաքի հզորությունն ու գեղեցկությունը, նրա ձեռքբերումներն ու հաջողությունները, և դուք կդառնաք նրա հիացած դա-



վանողները: Եվ ուրախանալով մեր քաղաքի մեծությամբ՝ չնոռանաք, որ այն հիմնել են քաջ, պատվի զգացումով ոգեշնչված մարդիկ, որոնք գիտեին՝ ինչ ասել է պարտք, և կատարեցին այն: Որևէ փորձության ժամանակ անհաջողություն կրելով՝ նրանք չէին կարող թույլ տալ, որպեսզի քաղաքը դրա պատճառով զրկվի իրենց քաջությունից, և հայրենիքին կամավոր գոհեցին մեծագույն պարգևը՝ սեփական կյանքը: Իրոք, կյանքը նվիրելով հայրենիքին՝ նրանք ձեռք բերեցին անանց փառք և ամենապատվավոր գերեզմանը, ինչպես ինձ է թվում, ոչ միայն այստեղ, որտեղ թաղված են, այլ ամենուր, որտեղ պատճառ կա հավերժ փառավորելու նրանց գովասանքի խոսքով կամ նոր փառավոր սխրանքներով: «Քաջերի գերեզմանն ամբողջ աշխարհն է», և ոչ միայն



Պերիկլես

հայրենի հողում դամբանի վրա գրվածով է արձանագրվում նրանց փառքի հիշողությունը, այլ նաև օտար հողում մարդկանց կենդանի հիշողության մեջ պահպանվում են եթե ոչ բուն սխրանքների պատմությունները, ապա գոնե քաջագործությունը: **Արդ, այդպիսի մարդկանց ընդունե՛ք որդես օրինակ,** երջանկությունն ընդունեք որպես ազատություն, իսկ ազատությունը՝ որպես քաջություն, և նայեք պատերազմական վտանգներին: Չէ՞ որ դժբախտ մարդիկ, որոնք քարշ են տալիս ողորմելի գոյություն՝ առանց ավելի լավ ապագայի հույսի, կյանքը վտանգելու պատճառ չունեն: Նրանց է միայն վայել հանուն հայրենիքի զոհաբերել կյանքը, որոնց կյանքում սպառնում է փոփոխություն դեպի վատը, որոնց համար անհաջող պատերազմը կարող է դառնալ ճակատագրական: Իսկ արժանապատիվ մարդու համար ստորացման տանջանքները մահվանից ավելի ցավալի են: Մահը նրա համար դառնում է անցավ, եթե նա մեռնում է իր ուժի գիտակցմամբ և ընդհանուրի բարիքի հույսով:

Ահա՛ թե ինչու ես այսօր չեմ սգալու այստեղ

գտնվող այս հերոսների ծնողների հետ միասին, այլ դիմում եմ ձեզ մխիթարանքով: ...երջանիկ է նա, ում այս զինվորների նման նախատեսված է այսպիսի հրաշալի վերջ, կամ նա, ում բաժին է հասնում այսքան պատվաբեր թախիժ, ինչպես ձեզ, և նա, ում երջանիկ կյանքին համարժեք էլ երջանիկ վերջ է վիճակված: ...թո՛ղ ձեզ համար մխիթարանք լինի այսուհետև ձեր որդիների սըխրանքը: Միայն փառքի՛ տենչը չի ավարտվում»:

Այնուհետև Պերիկլեսը դիմում է զոհվածների այրիներին. «Վերջապես, եթե պետք է հիշել կանանց քաջության մասին, որոնք այժմ այրի են դարձել, ապա ես ի մի կբերեմ արդյունքները՝ սահմանափակվելով կարճ խորհրդով: Չեզ համար ամենամեծ գովասանքը կլինի, եթե դուք չկորցնեք ձեզ հատուկ կանացի բնությունը որպես տիկնայք և քաղաքացիներ, և այն կինն է արժանի ամենաբարձր հարգանքի, որի մասին ամենաքիչն են խոսում տղամարդիկ, թեկուզ քննադատելու կամ գովելու պատրվակով»:

Եվ, վերջապես, Պերիկլեսն ամփոփում է. «Իմ նախորդների նման՝ ես, ըստ սովորության, իմ ելույթում արտահայտեցի այն, ինչ անհրաժեշտ էի համարում ասել զոհված հերոսների պատվին: Որոշ չափով մենք ընկածներին թաղման պատիվներ արդեն մատուցեցինք, իսկ մեր քաղաքն իր վրա կվերցնի նրանց երեխաներին պահելու ծախսերը մինչև նրանց հասուն տարիքի հասնելը: Սա բարձր պարգև է, այն դափնեպսակի նման, որը տրվում է հերոսների գործած մեծ սըխրանքների համար նրանց որբացած երեխաներին: **Քաղաքում, որտեղ դասերագմական սըխրանքի համար նախատեսված է ամենաբարձր դարգևը, քաղաքացիներն ամենաբազմ են**»:

* * *

Ավելի քան 2400 տարի է անցել Պերիկլեսի հրուշակավոր ելույթի օրվանից, սակայն պետական կառավարման ասպարեզում մեծանուն գործչի ներկայացրած դրույթներն արդիական են մինչև այսօր, քանի որ հանդիսանում են հավերժական ճշմարտություններ: Այդ ճշմարտություններն իրենց էական դերն են խաղացել բոլոր դարաշրջ-

Peloponnesian War, 431–404 B.C.



- ★ Athenian victory
- ☆ Spartan victory
- Athens and allies
- Sparta and allies
- Neutral states

ջաններում և բոլոր ազգերի մեջ, սակայն հատկապես Պերիկլեսին հաջողվել է դրանք ի մի բերել այնպիսի բյուրեղացմամբ, որ մեր առջև բացվում է ճշմարիտ պետության, ճշմարիտ պետական և հասարակական կարգի իրական նկարագիրը: Ոչ այնքան կարևոր է այն հանգամանքը, թե դրանք ինչ չափով են համապատասխանել աթենական իրականությանը, որքան այն, թե ինչ չափով են դրանք արտացոլում ցանկալի պետական կարգի բաղադրիչներից կարևորները: Պերիկլեսի ելույթում վերջիններիս ամբողջացումը վերածվում է յուրօրինակ պետական գաղափարախոսության:

Աթենացիներն իրենց պետական կարգը հիմնելու զարգացրել էին՝ ելնելով գոյություն ունեցող իրավիճակից: **«Մեր դեսական կառուցվածքի համար մենք օրինակ չենք վերցրել որևէ օտարերկրյա կարգ»**, - ասում է Պերիկլեսը: Պատճառն այն էր, որ Աթենական պետությունը նման չէր այլ պետություններին՝ թե՛ նրա շուրջը տիրող քաղա-

քական իրավիճակով և թե՛ ներքին կյանքով:

Աթենական պետական գաղափարախոսությունը հիմնված էր այն իրողության վրա, որ պետությունը մշտապես կանգնած էր պատերազմական վտանգի առաջ, և այդ վտանգին ըստ արժանվույն դիմակայելու համար անհրաժեշտ էր ունենալ հզոր պետություն՝ առողջ քաղաքական և բարոյաժողովրդական կարգերով:



„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolul. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԳԵՂՆԵԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԿՈՉ

Ռուսական համալսարանների մեր ուսանող ընկերները հրատարակել են ներկայ շարժումների առթիւ մի թռուցիկ-կոչ, որից քաղում ենք մի քանի հատուածներ: Կոչը ուղղուած է համայն Ռուսաստանի ուսանողութեան.

Ընկերներ,

«Կեանքը նորէն այլեկոծուեց: Ժողովրդի թշնամիները նորէն գործի վրայ են: Երկիրը «հանգստացնելուց» յետոյ, ստօլիպինեան կառավարութիւնը գահավիժում է ռեակցիայի թեք ճանապարհով: Նա ուղղեց նախ իր հարուածները ֆինլանդական ինքնավարութեան դէմ: Հերթը հասաւ արևմտեան նահանգներին: Չմոռացուեց և Կովկասը: Այդտեղ, անգամ վանքերի կամարների տակ՝ ամենատես դահիճները փնտրում են «ինքնավարութեան» ու «անջատականութեան» ուրուականը: Խուճապը չի դադարում...

«Ստօլիպինի և իր համհարզների համար չկայ պատմութիւն, չկան պատմական օրէնքներ: Նրանք չեն ուզում տեսնել նոյնիսկ Երիտասարդ Թիւրքիան, Երիտասարդ Պարսկաստանը, Հանրապետական Պորտուգալիան: Նրանք ուզում են, որ Ռուսաստանը լինի բռնութեան միակ օվազիսը՝ ոչ միայն Եւրոպայում, այլ և Ասիայում...

«Հարուածները տեղացին և համալսարանի վրայ, անգամ լոյեալ, օրինական

պրոֆեսորության վրայ: Գիտության տաճարը դարձաւ ոստիկանների ժողովա-տեղ... Դեռ երբեք Ռուսաստանը չի հասել բարոյական այդպիսի անկման:

«Ընկերներ: Յայտարարուած ընդհանուր դասադուլը միակ արժանատի պա-տասխանն է խենթացած կառավարութեանը:

«Կեցցէ՛ համառուսական ուսանողական դասադուլը... Սեղմե՛նք շարքերը և նո-րէն գնանք ժողովրդի մէջ՝ յեղափոխական կոչերով»:

**ՀՅ Դաշնակցութեան
Ռուսաստանի ուսանող. Կազմակերպութիւն
Փետրուար 1911**

ԱԶԳ

ՀՅԴ Դաշնակցութեան Եւրոպայի Ռուսանողական Միութեան Գործադիր Մարմինը հրատարակում է ընկերներին Համագու-մար ժողովի (1911 թ. ապրիլի 1ին), ուր պիտի քննուին օրակարգի մէջ նշանակուած հետեւեալ խնդիրները.

1. Թիրքիոյ, Կովկասի և Պարսկաստանի արդի կացութիւնը և Դաշնակցութեան բռնելիք դիրքը, ա. Կուլտուրական գործունէութիւն, բ. «Հակահոսանք», գ. Երիտա-սարդ թիրքերի քաղաքականութիւնը, դ. Բէակսիոնը և նոր շարժումը Ռուսաստա-նում. ճնշումներ և բանտարկութիւններ Կովկասում, ե. Սօցիալիստական կուսակ-ցութիւնները Ռուսաստանում, գ. Միջկուսակցական համերաշխութիւն:

2. Եւրոպայի դաշնակցայկան ուսանողների յարաբերութիւնները Թիրքիոյ, Ռուսաստանի և Ամերիկայի դաշնակցական ուսանողների հետ:

3. Եւրոպայի դաշնակցական ուսանողների յարաբերութիւնները ռուս, թիրք, պարսիկ ուսանողների հետ:

4. Դաշնակցական ուսանողների պրօպագանդը Եւրոպայում և գաղութներում (Բալկան, Եգիպտոս, Ամերիկա):

5. «Ռուսանող»-ի հրատարակութիւնը:

6. Դաշնակցական ուսանողների աշխատակցութիւնը կուսակցական մամուլին:

7. Դասախօսութիւններ Դաշնակցութեան ծրագրի և տակտիկի շուրջը:

Մ. Կարադեջյան, Է. Գևորգյան, Է.
Մելիքյան, Ա. Աբգարյան

Հայոց մեծ եղեռնի դասնության հիմնահարցերը հայ դասագրության մեջ, Երևան, 2010 թ., 460 էջ



Հայոց մեծ եղեռնի 95-ամյա տարեկիցը նշանավորվեց ոչ միայն զոհերի հիշատակի ոգեկոչումներով, զանազան քաղաքական ձեռնարկներով եւ գիտական համաժողովներով, այլև այդ թեմայով կատարված նորանոր ուսումնասիրությունների հրատարակությամբ: Ներկայացվող գիրքն էլ այդ ուսումնասիրություններից մեկն է, որի նպատակն է համակողմանիորեն հանրագումարի բերել Հայոց ցեղասպանության 1915-1916 թվականների իրադարձություններին նվիրված ժամանակակիցների ուսումնասիրություններն ու հուշագրությունները, հայ պատմաբանների հետագա հետազոտությունների արդյունքները եւ դրանց հիման վրա կատարել անհրաժեշտ ընդհանրացումներ:

Հեղինակներն իրենց առջև խնդիր են դրել նաև՝ վերհանել Մեծ եղեռնի ժամանակաշրջանում հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները, ի մի բերել դրանցում տրված գնահատականները, իրարամերժ պատկերացումների համադրմամբ վերականգնել այդ հերոսամարտերի իրական ծավալները, ընդգծել դրանց պատմական նշանակությունը: Այս մոտեցումը, ինչպես նշում են հեղինակները, ընթերցողին էլ հետագա ուսումնասիրողին կօգնի առավել հստակ պատկերացնել Մեծ եղեռնի իրական պատճառները:

Պատմագրության մեջ տարբեր, երբեմն իրարամերժ մեկնաբանություններ են ստացել նաև մեծ տերությունների՝ այդ շրջանի դիրքորոշումները հայկական հարցի նկատմամբ: Վերջնականապես ճշտված չէ Ցեղասպանության գոհերի իրական թիվը:

Ուսումնասիրությունը բովանդակում է դեպքերի ականատեսների և ժամանակակիցների, պատմագիտական ուսումնասիրությունների և հուշագրությունների, ինչպես նաև օտար հեղինակների հայերեն հրատարակված աշխատությունների քննական-վերլուծական նկարագիրը: Դրանցից շատերն արժևորվում են իբրև փաստական նյութի անփոխարինելի գանձարաններ, սկզբնաղբյուրի նշանակության գործեր: Անտեսված չեն նաև ուսումնասիրության նյութ դարձած հրատարակություններում առկա մի շարք վիճարկելի դրույթներ և մերժելի տեսակետներ:

Հեղինակների համար ուսումնասիրության անսպառ նյութ է տվել սփյուռքահայ պատմագիտական ժառանգությունը: Այն դիտվում է որպես Մեծ եղեռնի գիտական ամբողջական պատմության ստեղծման կարևորագույն և առաջնային հիմք, որպես փաստավավերագրական նյութի անսպառ շտեմարան:

Գրքում առանձին ենթաբաժիններ են հատկացված նաև հայրենական պատմագրության մեջ Հայոց ցեղասպանության վերաբերյալ սկզբնաղբյուրներին՝ փաստաթղթերի և նյութերի ժողովածուներին:

Պատմաքննական վերլուծության են ենթարկված նաև Հայոց մեծ եղեռնի 90-ամյա տարելիցի առիթով և դրանից ավելի ուշ հրատարակված մի շարք աշխատություններ էս:

Տպավորիչ է նաև աշխատասիրության մեջ գործածված սկզբնաղբյուրների և գրականության ցանկը: Տարբեր լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, հրատարակությունների ու փաստաթղթերի ցանկում նշված են 200-ից ավելի սկզբնաղբյուրներ, մի բան, որ արդեն իսկ մեծ աջակցություն է այս թեմայով կատարվելիք հետագա ուսումնասիրությունների հեղինակներին:

Նշենք նաև, որ գիրքը հրատարակության է ներկայացրել Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը:

Էդիկ Անդրեասյան

ՊՄՆՁԻ (Արմեն Պրոյան)

Արմեն Պրոյանը ծնվել է Երևանում 1968 թ-ին:
 1989 թ-ին ընդունվել է Երևանի Գեղարվեստի
 ակադեմիա: Ուսման վերջին տարվա ընթացքում
 Արմեն Պրոյանը զբաղվել է գրեթե դասկերա-
 զարդամբ, ինչդեռ նաև աշխատել է որդես մուլ-
 տիպիկացիոն անիմացիայի արվեստագետ:
 1997 թ-ին Արմեն Պրոյանը սեղափոխվել է Հու-
 նասան, որտեղ իր աշխատանքները ցուցադրվել
 են ամենասարբեր դասկերասահներում:
 2000-2003 թթ. նա ուսուցանել է Հունասանի
 «Intergraphics» արվեստի ֆոլեջի ուսանողներին:
 Այդուհետև ստեղծագործում է Հայաստանում:



Լուսանկարիչ՝ Յուլիա Գրիգորյանց

- 1989** «Ազատություն», Գեղարվեստի ակադեմիա, (Բեռլին, Գերմանիա):
- 1991** «Գարուն», Երիտասարդ արվեստագետի միություն, (Երևան, Հայաստան):
- 1992** «Հարմոնիա», Ազգային թանգարան, (Երևան, Հայաստան):
- 1994** «S.P.A.S.» Պասկերասահ, (Սանկտ-Պետերբուրգ, Ռուսաստան):
- 1997** «Tsiridis», Պասկերասահ, (Սալոնիկ, Հունաստան):
- 2000** «Gaia», Արվեստի տուն, (Սալոնիկ, Հունաստան):
- 2001** «Cinema», Արվեստի տուն, (Սալոնիկ, Հունաստան):
- 2001** «Soul of May», Արվեստի տուն, (Սալոնիկ, Հունաստան):
- 2002** «Soda», Անհասական ցուցահանդես, (Սալոնիկ, Հունաստան):
- 2003** «Silence», Անհասական ցուցահանդես, (Անգոլեմ, Ֆրանսիա):
- 2004** «La Ascenseur», Անհասական ցուցահանդես, Արվեստի տուն, (Սալոնիկ, Հունաստան):
- 2004** «Vagabond» (Սալոնիկ Հունաստան):
- 2005** Անհասական ցուցահանդես, Պասկերասահ «Christina Karella», N.Psihiko, (Աթենք, Հունաստան):
- 2005** Պասկերասահ «Periplanisi Glyfada» (Աթենք, Հունաստան):
- 2005** Պասկերասահ «Skoufa» Kolonaki (Աթենք, Հունաստան):
- 2006** Անհասական ցուցահանդես, Պասկերասահ «Christina Karella» N.Psihiko, (Աթենք Հունաստան):
- 2007** Անհասական ցուցահանդես, Պասկերասահ «Artville» Kolonaki (Աթենք, Հունաստան):
- 2008** «The Crossroads of Civilizations», Աթենքի ֆաղափամբեսարանի մեակուրթային կազմակերպություն (Հունաստան):
- 2010** Երևանի ՄԱԿ-ի գրասենյակ (Հայաստան):
- 2011** «Բյուրոկրաս» գրախանութ (Երևան, Հայաստան):

ԴՐՕՇԱԿ

Պ ա ս Կ Ե Ր ա Ր ա Կ





ՀԻՐՇԱԿ

